




Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Լ. ԲԱՐԹՈՎԵԼԻՔՅԱՆ

ՀԱՄԱՆՈՄԿՈՒՄԻ [Բ]  
ՀՈՒՆԻՍՅԱՆ ՊԼԵՆՈՒՄԻ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ



ՊԵՏԶՐԱՏ

1931

ՅԵՐԵՎԱՆ



3K02

7-30

Լ. ՔԱՐԹՎԵԼԻՇՎԻԼԻ

1 DEC 2009

24 SEP 2006

ՀԱՄԿՈՄԿՈՒՄԻ (Բ)  
ՀՈՒՆԻՍՅԱՆ ՊԼԵՆՈՒՄԻ  
ԱՐԴՅՈՒՆ ՔՆԵՐԸ

~~3625~~

1283

ՊԵՏՀՐԱՏ



ՅԵՐԵՎԱՆ



29 JUN 2013

7691

ՊԵՏՐՈՍԻ ՏՊԱՐԱԿ  
 ՀՐԱՏԱՐԱԿ. № 1761  
 ԳԼԱՎԼԻՏ 6591(Բ)  
 ՊԱՏՎԵՐ 3389  
 ՏԻՐԱԾ 6000

Կենտրոնական Կոմիտեյի հունիսյան պլենումը հրա-  
 կայական նշանակութիւն ունի մեր կուսակցութեան  
 համար, նախ այն պատճառով, վոր նա կուսակցական  
 բոլոր կազմակերպութիւններէ աշխատանքի որակաւ-  
 րի մեջ դրեց այն բոլոր հարցերը, վորոնք ներկա ժա-  
 մանակաշրջանի համար հանդիսանում են հիմնական և  
 կենտրոնական հարցեր, յերկրորդ այն պատճառով,  
 վոր այդ պլենումը մի անգամ ևս ցույց տվեց ամբողջ  
 կուսակցութեանը, թե ինչպէս պետք է կոնկրետ կեր-  
 պով, գործնականորեն ղեկավարել այժմ:

Պլենումը քննեց յերեք հիմնական հարց՝ ցանքի  
 արդյունքները և բերքահավաքի խնդիրները, յերկա-  
 թուղային տրանսպորտը և նրա հերթական խնդիրները,  
 Մոսկվայի քաղաքային տնտեսութիւնը և Պորհրդա-  
 յին Միութեան քաղաքային տնտեսութեան զարգա-  
 ցումը: Այս բոլոր հարցերի առթիւ Համ. Կ(ը)Կ-ի ԿԿ-ի  
 պլենումի ընդունած վորոշումները գործնական ծրա-  
 դիր են ամբողջ կուսակցութեան աշխատանքի համար:  
 Կուսակցական բոլոր կազմակերպութիւնները պետք է  
 ամբողջ թափով ձեռնամուխ լինեն պլենումի առաջա-  
 դրած խնդիրների լուծմանը: Կուսակցութեանն այդ  
 վորոշումների շուրջը պետք է մոբիլիզացիայի յենթա-  
 կի ամբողջ բանվոր դասակարգին, ամբողջ կոլանտե-  
 սական գյուղացիութեանը և անհատական չքավոր ու  
 միջակ լայն մաստաներին:

Գլխավոր, հիմնական խնդ հետևութիւն պետք է

40-92



անեն Անդրկովկասի կուսակազմակերպությունները պլենումի աշխատանքից — պետք է սովորեն կոնկրետորեն դեկավարել: Այդ առանձնապես կարևոր է Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների համար, վերոնք առաջին քայլերն են անում այդ ուղղությամբ: Նրանք պետք է կարողանան գործնականորեն կիրառել կուսակցության հիմնական գիծն Անդրկովկասում կատարվող աշխատանքի յուրաքանչյուր բնագավառում, վերջ տալ «բնդհանուր» խոսակցություններին և չաղակերտություններին, գործնականորեն ձեռնարկել այսօրվա կարեւորագույն հարցերի լուծմանը, մոբիլիզացիայի յենթարկելով նրանց չուրջը կուսակցական բոլոր կազմակերպություններին, ամբողջ կոմյեբիտմիությունը, բանվորներին, կոլտնտեսականներին, չրքավորներին ու միջակներին, համառ, անդուլ պայքար մղել հնգամյակի 3-րդ վճռական տարվա պլանն իրագործելու համար:

1. ԽՍՀՄ-Ի ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ—ՃԳՆԱԺԱՄԻ  
ԽՈՐԱՑՈՒՄԸ ԿԱՊԻՏԱԼԻ ՑԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Հնգամյակի այս վճռական տարում մենք հսկայական հաջողություններ ու նվաճումներ ենք ձեռք բերել: Սոցիալիստական վճռական արշավն ավելի ու ավելի լայն ու խորն է ծավալվում: Մեր սոցիալիստական շինարարության բայլչևիկյան տեմպն որոշվում է ապրիլիցս եւ ամբողջ աշխարհն իր հաջողություններով: Խորհրդային Միության խնդուստրացումը զարգանում է արագ տեմպով: Նավթի հնգամյա պլանը կատարվեց յերկու և կես տարում: Արդյունաբերության

մի շարք խոշորագույն ճյուղերն իրենց հնգամյա պլանը կատարեցին ժամկետից առաջ՝ յերկու և կես տարում:

Մենք մեծ շինարարություն ծավալեցինք Խորհրդային Միության մեջ: Այս տարվա մոտակա ամիսներին գործող խոշոր ձեռնարկություններն շարքն են անցնելու սոցիալիստական շինարարության նոր հսկաներ՝ Մազնիտստրոյը, Կոկչեցկի ավազանը, Խարկովի տրակտորի գործարանը, Նիժնի-Նովոգորոդի ավտոմոբիլի գործարանը և ուրիշները:

Ուժեղ թափով առաջ է դնում գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը: Քանի մոտենում է իր վախճանին կուլակության վորպես դասակարգի վերացումը՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա, անդառնալիքներն փուլ է գալիս կապիտալիզմի վերջին քաղան՝ մանր-գյուղացիական տնտեսությունը: Յերկրորդ բայլչևիկյան դարնան հաջողությունները, նախ և առաջ դարնանացանի ընդարձակումը զգալի չափով կապված է կոլեկտիվացման հաջողությունների, դաշտային աշխատանքներում մեքենաների լայն գործածության հետ:

Մենք աճում ենք: Խորհրդային Միությունը հաղթանակից հաղթանակ է դնում սոցիալիստական ծավալուն արշավի բոլոր ճակատամասերում:

Միջազգային կացություն ի՞նչպիսի պայմաններում է ծավալվում մեր սոցիալիստական շինարարությունը: Համառոտակի հայացք գցելով այն բոլորի վրա, վոր կատարվում է ներկայումս կապիտալիստական աշխարհում, նախ և առաջ պետք է մատնանշել տնտեսական ճգնաժամի ել ավելի խորանալը կապիտա-



լի յերկրներում, կապիտալիստական սխտեմի բոլոր հակառակությունների ուժեղանալն ու սրվելը:

Բուրժուազիան ճգնաժամից դուրս գալու յեւրե և փնտռում պատերազմի մեջ: Պատերազմը նախ և առաջ պատրաստվում է Խորհրդային Միության դեմ: Իմպերիալիստները կատաղի պատրաստություններ են տեսնում ԽՍՀՄ-ի դեմ ռազմական ինտերվենցիա գործելու: Նրանք իրենց ամբողջ ուժով աշխատում են միասնական ճակատ ստեղծել մեր դեմ: Սակայն նրանց խանդարում են նախ՝ իմպերիալիստական յերկրների իրենց մեջ գոյություն ունեցող հակառակությունները, վորոնք ավելի յեն սրվում տնտեսական ամենախոր ճգնաժամից, յերկրորդ՝ հեղափոխական վերելքի աճումը կապիտալիստական յերկրներում ու գաղութներում, ամբողջ աշխարհի պրոլետարիատի ու աշխատավորության պայքարը պատերազմի վտանգի դեմ, վոր մղվում է Խորհրդային Միությունը պաշտպանելու ընդդէմ:

ճգնաժամի խորանալը կապիտալիստական աշխարհում, մեր դեմ միասնական ճակատ ստեղծելու ճանապարհին իմպերիալիստների առաջ ծառացած խոչընդոտները ճգնաժամից ցնցված կապիտալիստական առանձին յերկրներին մղում են ԽՍՀՄ-ի դեմ տնտեսական հարձակումներ հաստատելու և վերջիններս ընդարձակելու ուղին: Թեպետ այդ հանդամանքը չի նվազեցնում մեր դեմ ուղղված պատերազմի վտանգը, սակայն հնարավորություն է տալիս մեզ ստատգործելու այն «դադարը», վորի մասին ասել է դեռևս Լենինը, ել ավելի արագ ծավալելու սոցիալիստական շի-

նարարութունը: Այն հակայական հանդուժյունների և նվաճումների հետ միասին, վոր ձեռք ենք բերել արդյունաբերության և գյուղատնտեսության մասշտաբիցում, այս տարվա առաջին հինգ ամսվա արդյունքները ցույց տվին առանձին ճակատամարտեր, վորտեղ մենք դեռ զգալի չափով հետ ենք մնացել պլանային առաջադրանքներից, վորոնք դանդաղեցնում են մեր ընդհանուր հաջող առաջընթացը դեպի ԽՍՀՄ-ի սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման ավարտումը:

Մենք բայլընիկներս այսպիսի մարդիկ ենք. հենց վոր պարզում ենք թե ինչպիսի խոչընդոտ պետք է հաղթահարել այժմ, իսկույն մոբիլիզացիայի յենք յենթորկում մեր ամբողջ ուշադրությունը, մեր ամբողջ ուժը, կազմակերպում ենք մասսաներին, գրոհ ենք տալիս մեր բայլընիկյան ամբողջ յեռանդով այդ խոչընդոտի վրա և հաղթահարում ենք նրան:

Կուսակցության ԿԿ-ի պլենումը մատնանչեց, թե սոցիալիստական արչավի ճակատի ինչպիսի հիմնական հանգուցային բնադախտներ են հետ մնում, ինչպիսի նոր հակայական յնդիրներ յողմը պետք է դարձնի կուսակցության յիր յերեսը՝ հետ մնացած բնադախտներն առաջ քաշելու և դրանով իսկ մեր արչավի ճակատը հավասարեցնելու համար:

Ինչպիսի նոր յնդիրներ են դրված այժմ մեր առաջ ամենատուր կերպով:

1. Բերքահավաքը,
2. Յերկաթուղային տրանսպորտի վերակառուցումը,



3. Քաղաքային տնտեսութեան բարեկալումը և զարգացումը:

2. ՅԱՆՔԻ ՎՃՌԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ԲԵՐՔԱՀԱՎԱԿԻ ԿԱՄԱՐԱՆՈՒՄԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գարնանացանի կամպանիան մենք ավարտեցինք: Կարելի չե ասել, Վոր մեր աշխատանքի առաջին շրջանն անցավ: Վորո՞նք են այս տարվա մեր գարնան աշխատանքի արդյունքները: Ի՞նչ խնդիրներ են կանգնած մեր առաջ հետաքալի համար:

Պլանումը սպառիչ, ճշգրիտ պատասխաններ տվեց այդ յերկու հարցին:

Այս տարվա գարնան առաջին հիմնական արդյունքը կոլեկտիվ շարժման վճռական հաղթանակն է: Հիմնական հացահատիկային շրջաններում՝ Հյուսիսային Կովկասում, Դաշտային Ուկրալինայում, Ստորին Վոլգայում և այլն, կոլեկտիվացումն ավարտված է: Այդ շրջաններում գյուղացիական տնտեսությունների ավելի քան 80 տոկոսը մտել է կոլտնտեսությունները: Ամբողջ ցանքի և գյուղատնտեսական արտադրության միջոցների ավելի քան 90 տոկոսը պատկանում է կոլեկտիվներին: Մյուս հացահատիկային շրջաններում, վրձնական բամբակադրծական և ճակնդեղացան շրջաններում կոլեկտիվները միացրել են տնտեսությունների ավելի քան 50 տոկոսը և ցանքերի ու գյուղատնտեսական արտադրության միջոցների ավելի քան 60 տոկոսը: Այդ հնարավորությունն է տալիս հիշյալ շրջաններում համատարած կոլեկտիվացումն ավարտել յեթե վոչ այս տարվա վերջը, համենայն դեպս վոչ ուշ, քան 1932 թվականի դարնանը:

Ի՞նչ են նշանակում այս արդյունքները:

Այն, Վոր ճիշտ է, կենսունակ է կուսակցության 16-րդ համագումարի և ԿԿ-ի դեկտեմբերյան պլենումի նշած գիծը: Այդ արդյունքները ցույց են տալիս, Վոր կուսակցության կենտկոմի վորոշումների և վերջին կուսակցական համագումարի ուրվագծած կոլեկտիվացման տեմպերն արդեն դերադանցված են:

1931 թվականի դարնան կամպանիայի շնորհիվ կոլեկտիվ շարժման ասպարիզում մեր ձեռք բերած վճռական հաղթանակը ցույց է տալիս, Վոր կուսակցությունը, կենտկոմի, դեկտիվությունում, յերկիրը տանում է հաղթանակից հաղթանակ լենինյան ուղիով:

Գարնան կամպանիայի արդյունքները մի անգամ ևս հարված են հասցնում աջ ոպորտունիստներին, վորոնք շաղակրատություններ եյին անում կոլեկտիվացման մասին, չեյին հավատում կուսակցության ուրվագծած կոլեկտիվացման ուղուն և առարկում եյին նրա դեմ: Միևնույն ժամանակ այդ արդյունքները հարվածում են «ճախերին», վորոնք շաղակրատում եյին, թե 1930 թվականի դարնանից հետո կանգ է առել կոլեկտիվացման զարգացումը, թե գյուղացիությունը կոլտնտեսությունները չի մտնում:

Ուրիշ ի՞նչ են նշանակում այս տարվա դարնան արդյունքները: Այն, Վոր հացի և գյուղատնտեսական կարևորագույն հումույթի՝ բամբակի, ճակնդեղի և այլն հիմնական արտադրողը դարձել են կոլտնտեսությունները: Նրանց ձեռքումն է գտնվում գյուղացիական ցանքի ավելի քան 90 տոկոսը հիմնական հացահատիկային շրջաններում և ավելի քան 60 տոկոսը՝ մյուս հացահատիկային շրջաններում ու վճռական բամբակադրծական և ճակնդեղացան շրջաններում:



Դրանից հետևում է, Վոր կոլտնտեսական գյուղացիությունն արդեն դարձել է հողագործության կենտրոնական դեմքը:

Քանի դեռ գյուղատնտեսական արտադրության մեջ հիմնական արտադրողը միջակն էր, նա հանդիսանում էր հողագործության կենտրոնական դեմքը: Այժմ, յերբ կոլտնտեսությունները դարձել են հացահատիկի, բամբակի, ճակնդեղի, արևածաղկի և այլ տեխնիկական մշակութային հիմնական արտադրողը, կոլտնտեսական գյուղացիությունը դարձավ հողագործության կենտրոնական դեմքը, իսկ անհատական չքավորի և միջակի դերը գյուղատնտեսական արտադրության մեջ դարձավ յերկրորդական:

ՆԱՀՄ-ի հացահատիկային ու հումուսային շրջաններում տեղի յե ունենում համատարած կոլեկտիվացումը և այդ հիման վրա կոլլեկտիվյան, վորպես գտակարդի, վերացումը:

Այդ խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է, Վոր ամեն մի կուսակցական և կոմյերիտական ըջիջ, ամեն մի կոմունիստ և կոմյերիտական պարզ հասկանա և իր ամենորյա աշխատանքում հաստատապես կիրառի կուսակցության այն լոզունդը, վորն ասում է, թե գյուղում ստեղծվել է պրոլետարական դիկտատուրայի գլխավոր և հաստատուն հենարանը՝ համահմու կոլտնտեսական գյուղացիության:

Այդ խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է, Վոր կուսակցական կադմակերպությունները մասսայական աշխատանքի ընթացքում բանտրեն խորհուրդների 6-րդ համադումարի առաջադրած այն հարցը, վոր այժմ «դեռևս կոլտնտեսություն չմտած ամեն

մի անհատական չքավորի և միջակի առաջ ծառացած է մի հիմնական հարց՝ կոլտնտեսության կոլմնակից է նա, թե՞ դեմ»:

Այս տարվա դարնան հետեյալ արդյունքն է խորհուտնեսությունների զարգացումն ու ամրացումը: Յեթե 1928-1929 տարում վորեւե մեկը տարակուսում էր, թե կկարողանա՞ն արդյոք խորհուտնեսությունները դառնալ գյուղատնտեսության վերակառուցման հիմնական լծակը, յեթե աջ ոպորտունիստները սքնդում էյին, թե խորհուտնեսությունները մեծ դեր չեն խաղա գյուղատնտեսական արտադրության մեջ, ապա այս տարվա դարնան արդյունքները ցույց են տալիս, Վոր խորհուրմտությունները իրոք դարձել են մեր գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման լծակները:

Յեթե անցյալ տարի խորհուտնեսությունների ցանքը կադմում էր 3,2 միլիոն հեկտար, ապա այս տարի նրանց ցանքերն ընդարձակվել են ավելի քան 2 անգամ: Այժմ խորհուտնեսություններն ունեն 8 միլիոն հեկտարից ավելի ցանք: Այդպիսով նրանք գերակատարել են խորհուրդների 6-րդ համադումարի առաջադրանքը:

1931 թվականի դարնան ընդհանուր արդյունքը, վորը ընտրոշում է գյուղատնտեսության հանրային համվածի վճռական հաղթանակը, Կի-ի պլենումը վորոչեց այսպես՝ «մեր յերկիրը դարձել է ամենախոշոր գյուղատնտեսության յերկիրն աշխարհում»:

Մենք ունենք 200.000 կոլտնտեսություն, վորոնք միացնում են 13.000.000 անհատական տնտեսություններ, և 4000 խորհուտնեսություն: Խորհրդային ու կոլեկտիվ տնտեսությունները միասին ցանել են ավելի քան դարնանացանի յերկու յերրորդ մասը, միջոն 12



միլիոն անհատական դյուղացիական տնտեսութիւնները  
ցանկէ են ամբողջ դարնանացանի մոտ մի յերրորդ մա-  
սը, ընդ վորում հանրայնացված հատվածում հողն ա-  
վելի լավ և մշակված, քան անհատականների մոտ:

Ի՞նչ խնդիրներ են ծառացած այժմ մեր առաջ  
դյուղատնտեսութեան ասպարիզում, ի՞նչպիսի դժվարու-  
թյուններ հաղթահարելու համար պետք և մորթիլիզա-  
ցիայի յենթարկի այժմ կուսակցութիւնը մասսանե-  
րին:

Մեր գլխավոր և հիմնական խնդիրն է չեանգստա-  
նալ կոլեկտիվացման հաջողութիւններով, այլ ամ-  
բացնել գոյութիւն ունեցող կոլտնտեսութիւնները, եւ  
ավելի բարելավելով աշխատանքի կազմակերպումը,  
իրապես կիրառելով գործավարձը, չարկապելով վերջինը  
կոլեկտիվ շարժման հետագա աճման հետ:

#### ԲԱՅԼՇԵՎԻԿՈՐԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԲԵՐԲԱՀԱՎԱՔԸ

Այս տարի բացառիկ նշանակութիւն է ստանում  
բերքահաւաքը: Լուծել այդ խնդիրը, նշանակում է  
ամբացնել դյուղատնտեսութեան սոցիալիստական վե-  
րակառուցման գործում կուսակցութեան ձեռք բերած  
վճարական հաջողութիւնները:

Ինչո՞ւ այս տարի կուսակցութիւնը բերքահաւա-  
քի կամպանիան առաջադրում է վորպես գլխավոր խն-  
դիր: Անցյալ տարվա փորձը ցույց տվեց, վոր ավելի  
հեշտ է ցանել, քան կազմակերպել բերքահաւաքը:  
Անցյալ տարի բերքի մի մասը մենք կորցրինք այն  
պատճառով, վոր վատ ելինք կազմակերպել բերքահա-  
վաքը, մոռացել ելինք կենդանի քաշող ուժը, հնձված

հացը վեր եր ընկած դաշտում և թրջվում եր անձրևից:  
Խորհանտեսութիւններում բացասական դեր խաղաց  
մեքենաների վատ ոգտագործումը, նրանց դիմադուրի  
սպասարկումը. այդ պատճառով մենք կորցրինք բերքի  
մի մասը: Այդպիսով անցյալ տարի մենք չկարողա-  
ցանք լրիվ հաղթահարել այն դժվարութիւնները, վո-  
րոնց հանդիպեցինք բերքահաւաքի ժամանակ:

Այս տարի զգալիորեն ավելացել է հանրային հատ-  
վածի բերքահաւաքի տարածութիւնը: Մեզ մոտ բեր-  
քահաւաքի աշխատանքն անհամեմատ ավելի քիչ է մե-  
քենայացված, քան ցանքի աշխատանքը: Ուստի մեր  
խոշոր դյուղատնտեսութեան մեջ բերքահաւաքն ավելի  
դժվարին և բարդ խնդիր է, քան ցանքը:

Ցանքի վերջնական արդիւնքը կպարզվի միմիայն  
բերքահաւաքից հետո: Ցանքի կամպանիայից մենք  
դուրս յեկանք հաջողութեամբ. այժմ մեր գլխավոր  
խնդիրն է բերքահաւաքը: Բերքահաւաքը տնտեսական  
և քաղաքական կարևորագույն խնդիր է: Կէ-ի պլենումն  
այժմ այդ խնդիրը դրել է ամբողջ կուսակցութեան,  
ամբողջ յերկրի առաջ:

Բերքահաւաքի հաջող կիրառումը պետք է ամբացնե  
գոյութիւն ունեցող կոլտնտեսութիւնները, նպաստի  
կոլտնտեսական նոր հոսանքի ծավալմանը անհատական  
չքաղաքական միջակերպի մեջ:

Ի՞նչ հողի վրա պետք է կազմակերպել և կիրառել  
բերքահաւաքի կամպանիան:

Նախ և առաջ գործավարձի հիման վրա: Կոլտնե-  
սութիւններում բոլոր աշխատանքներն եւ առանց բա-  
ցառութեան պետք է կազմակերպված լինեն գործավար-



ձի հիման վրա: Այդ դործավարձի ձեւերը պետք է հասկանալի լինեն յուրաքանչյուր կոլտնտեսականի համար: Վո՞չ մի բարդ «դիտուն» հաշվարկում: Յուրաքանչյուր կոլտնտեսական իր աշխատանքային դպրքի դրանցումներից պետք է դիտենա, թե քանակապես ու վորակատես ինչպես է հաշվվում իր կատարած աշխատանքը: Առանց դործավարձ մտցնելու մենք չենք կարող ծավալել այժմ բերքահավաքի կամպանիան:

Յերկրորդ՝ բաշխելով աշխատանքը, ամբացնելով կոլտնտեսականներին ու խորհրդակցական բանվորներին աշխատանքի վորոշ բնագավառներին: Այլ խոսքով՝ կոլտնտեսութուններում և խորհրդակցութուններում աշխատանքը լավագույն ձեով կազմակերպելու համար պետք է վերջ տալ դիմադուրի աշխատանքին: Անցյալ տարվա փորձը ցույց է տալիս, վոր լավ արդյունք չի ստացվել, յեթե վոչվոր չդիտել, թե ինչի համար է պատասխանատու ինքը: Այժմ մենք կոլտնտեսութուններում պետք է կիրառենք աշխատանքի անհատական և խմբակային բաշխումը, պետք է առանձին խմբակներին, բրիգադներին, առանձին կոլտնտեսականներին ամրացնենք տրակտորին, մեքենային, ձիուն, բերքահավաքի վորոշ հողամասերին: Այն ժամանակ ամեն մեկը կիմանա, թե ինչի համար է պատասխանատու ինքը: Առանց արմատապես վերացնելու դիմադուրի աշխատանքը, մենք չենք կարող լրիվ հաղթահարել բերքահավաքի դժվարութունները: Առանց դրան մենք չենք կարող կազմակերպել այն տասնյակ միլիոնավոր բանվորական ձեռքերը, վոր ունեն կոլեկտիվների մեջ

մտած մեր 13 միլիոն տնտեսութունները և 4000 խորհրդակցութունները:

Յեթե մենք այժմ ձեռնամուխ չլինենք աշխատանքի ճիշտ կազմակերպմանը, ապա չենք կարող ապահովել բերքահավաքը բանուժով: Աշխատանքի կազմակերպումը վճռական հարց է խոշոր դյուղատնտեսության դարգացման համար:

Յերրորդ՝ ճիշտ և ժամանակին բաշխելով յեկամուտները կոլտնտեսութուններում: Ի՞նչ ունենք անցյալ տարվա փորձը, յերբ շնորհիվ այն հանգամանքի, վոր բերքը բաշխվել էր ըստ շնչի, աշխատանքը չէր խթանվել և շատ վատ էր կատարվել բերքահավաքը: Բացի դրանից, առանձին կոլտնտեսութուններում բերքի բաշխումը ձգձգվել էր համարյա մի ամբողջ տարի: Տարին անցել էր, իսկ բերքը դեռ չէր բաշխվել, կոլտնտեսականներից վոչ վոր չդիտել, թե յերբ և վորքան է ստանալու: Այս տարի մենք պետք է անմիջապես ձեռնարկենք կոլտնտեսականների մեջ յեկամուտները ճիշտ բաշխելու դործի կազմակերպմանը: Կարելի յեցանել և բերքը հավաքել, սակայն յեթե յեկամուտները ճիշտ չբաշխվեն ըստ աշխատանքի՝ հաշվի առնելով վոչ միայն կատարված աշխատանքը, այլ և նրա վորակը, յեթե կոլտնտեսութունը վորոշ միջոցներ չհատկացնի անրաժան ֆոնդին, յեթե լծկանների ու մթերատու անասունների հանրայնացած մասը ապահովված չլինի կերով, յեթե չկազմվեն սերմացիի ֆոնդեր, խոշոր սոցիալիստական դյուղատնտեսութունը չի կարող դարդանալ:

Չորրորդ՝ ճշտիվ և ժամանակին հաշվառման յեկաքարկելով յուրաքանչյուր կոլտնտեսականի աշխատանքը:



Բային որերը: Վերջին հաշվով հաշվառումն է վար-  
շում և՛ գործավարձի կիրառումը, և՛ աշխատանքի կազ-  
մակերպումը, և՛ բերքի նիշտ բաշխումը:


Կոլտնտեսությունների մեջ ճիշտ կազմակերպված հաշ-  
վառումը կամրացնի գոյություն ունեցող կոլտնտե-  
սությունները, նոր մղում կտա կոլեկտիվ շարժման  
հետագա աճմանը: Առանց կանոնավոր հաշվառման  
մենք պատշաճ հիմքի վրա չենք կարող դնել կոլտնտե-  
սության աշխատանքը: Առանց հաշվառման կոլտնտե-  
սության գործերը կխճճվեն: «Սոցիալիզմը նախ և առաջ  
հաշվառում է»: Ղեկավարվելով Լենինի այս խոսքե-  
րով, պետք է ասել, վոր առանց հաշվառման մենք չենք  
ավարտի գյուղատնտեսության սոցիալիստական վե-  
րակառուցումը:

Մեծ խնդիրներ են դրված մեքենատրակտորային  
կայանների առաջ: ՄՏԿ-ները պետք է միջոցներ ձեռք  
առնեն, վոր բերքը հավաքվի և իրենց միացրած կոլ-  
տնտեսությունների ապրանքային արտադրանքը հանձ-  
նրվի պետությունը. բացի դրանից, նրանք այս տարի  
ամառը և աշնանը պետք է անեն 15 միլիոն հեկտար  
աշնանավար, 8 միլիոն հեկտար աշնանացան, հերկեն 5  
միլիոն հեկտար ցել: Մեքենատրակտորային կայաննե-  
րի աշխատանքի այս ծրագիրը կազմում է այն աշխա-  
տանքի բազադրիչ մասը, վորը հնարավորություն  
պետք է տա այս տարի աշնանը և ամառը աշնանավար  
անել 42 միլիոն հեկտար հող, 43 միլիոն հեկտար աշ-  
նանացան, 15 միլիոն հեկտար ցել:

Աշնանացանի և աշնանավարի ժամանակաշրջանին  
գյուղացիները բերքահավաքի կամպանիայի կիրառման  
ամբողջ բարդությունը պարզելու համար պետք է չեչ-

տել, վոր այս տարի բերքահավաքի աշխատանքներն,  
աշնան աշխատանքներն, վերահիշող մասը կատարվելու  
յն լծկաններով: Ուստի մեր բոլոր կազմակերպու-  
ները, մասնավորապես մեքենատրակտորային կայան-  
ները, վորոնց միջոցով ենք վոչ միայն անխնայապես  
վերացնում ենք կոլտնտեսությունները, այլև և պղծա-  
կերպում ենք նրանց ամբողջ կոլեկտիվ տնտեսու-  
նը, պետք է ապահովեն աղբ բոլոր աշխատանքները,  
վոչ միայն տրակտորներով և մեքենաներով, ալև և  
առանձնապես լարեն ջանքերը իրենց աշխատանքը ձեռ-  
քով և այլ լծկաններով ապահովելու համար: Սբլ ա-  
ռավել ևս պետք է ընդգծենք մենք Անդրկովկասում,  
վորովհետև զարնանացանին նախադասարան: Վելին  
մենք բավականաչափ նկատի չ'յկենք անել լծկանների  
նշանակությունը:

Անհրաժեշտ է կանգ առնել նաև այն խնդիրն,  
վոր, վորոնք կանգնած են խորհրդանշաբաշխության  
առաջ: Այս տարի հացահատիկային խորհրդանշաբաշխու-  
ները պետք է քաղեն 4200 հազար հեկտար բելը և  
հանձնեն պետությունը առնվազը 160 միլիոն կոլթ  
ապրանքային հացահատիկ, վորի առնվազը 70 տոկոսը  
պետք է հանձնվի մինչև նոյեմբերի մեկը: Այդ առա-  
ջիկա շերքահավաքի կամպանիայի տնտեսական և քա-  
ղաքական վաշտավորության խնդիրներից մեկն է: Այդ  
խնդիրը հնարավոր է իրագործել, յեթե կոլտնտեսու-  
թյունները լայն ոգնություն ցույց տան խորհրդանշա-  
բաշխուներին, ապահովեն նրանց բանումով, մոբիլիզա-  
ցիայի յեթեմարկվեն փոխադրական միջոցները, մա-  
րտական աշխատանք կարողանան խորհրդանշաբաշխու-  
նը:





Կէնի պլենումն ամբողջ կոռուպցիոն ուշադրութեամբ մօրբիլիցայի յենթարկեց բերքահաւաքի կամայանիայի աչք խնդիրներ շուրջը: Մենք պետք է մարտակամորեն կատարեմք բերքահաւաքը, կազմակերպելով բանֆօրներն, կոլտնտեսականներին և անհատականներին, նրա բոլոր դժվարութիւնները հաղթահարելու համար: Այդ բոլորը մենք կարող ենք գլուխ բերել լայն մօրբիլիցայի յենթարկելով մասնաճիւղին, վնասարար ճնշելով կուլակութեանը, ել ավելի ծախելով կուլակով շարժումը, ավարտելով կուլակութեան, վարպետ դասակարգի, վերացումը հարկադրային միութեան հացահատիկային և հումութեային շրջաններում՝ համատարած կուլակութեամբ հիման վրա: Այդ բոլոր խնդիրներն իրագործելու համար անհրաժեշտ է հաղթահարել ամեն տեսակի աչք և «ձախ» ու պարտունիքներ:

### 3. ՅԵՐԱԿԱԹՈՒՎԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱ ՀԵՏԱԳԱ ԱՃՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Մենք հակառակն հաջողութիւններ ունենք սոցիալիստական շինարարութեան ճակատում: Սակայն միաժամանակ հետ ենք մնում այդ ճակատի առանձին մասերում: Ժողովրդական տնտեսութեան «նեղ տեղերը» մեկը դարձած, հետ մնացող մասերից մեկն է յերկաթուղային տրանսպորտը: Այժմ բոլորի համար հասկանալի չէ, թե վորքան սերտորեն կապված է տրանսպորտի զարգացումը մեր ինդուստրիայի զարգացման և գյուղատնտեսութեան սոցիալիստական վե-

րակառուցման հետ: Սակայն 2-3 տարի առաջ շատերը չէին պատկերացնում այդ, յենթադրելով, թե յերկաթուղային տրանսպորտը մի ինքնամիտի տնտեսութեան է: Յերկաթուղին բնու է փոխադրում, սակայն դա ուղղակի առնչութեան չունի յերկրի ինդուստրիալ-ման գարդացման և գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման հետ:

Վերջին տարին ակնհայտորեն ցույց տվեց, վոր մեր աշխատանքը դեմ է առնում յերկաթուղային տրանսպորտին: Յեթ յերկաթուղիները վատ են աշխատում, դա անդրադառնում է սոցիալիստական շինարարութեան բոլոր բնաշխատներին վրա: Դրանում համարվեցինք մենք այս տարի: Ձմեռը յերկաթուղիների աշխատանքի վատանալը վիճեցրեց ժողովրդական տնտեսութեան մի շարք ճշգրտելի պլանների կատարումը: Եւ յիստորի պլանները, ստիպաւ յայտնել հանցոյցի Յեթի առաջին յեռամոյակում թերակատարվեցին մեծ մասն ընկնում է տրանսպորտի աշխատանքի վրա: Քանի վոր մեր արդյունաբերութեան և գյուղատնտեսութեան զարգացումը կապված է յերկաթուղային տրանսպորտի աշխատանքի հետ, կուռակցութեանը պետք է իր ամբողջ ջանքն ու յետանդը կենտրոնացնի ժողովրդական տնտեսութեան այդ բնագավառի վրա՝ սոցիալիստական արշալի փակաւր հավասարեցնելու համար:

Ի՞նչ պատկեր ունի մեր յերկաթուղային տրանսպորտը: Մենք, մեր ստացած Ժառանգութեան հետ համեմատած, մեծ բարձրութեան հասցրինք մեր յերկաթուղիները ըստ վորակական և քանակական ցուցանիշների:



Վերջին յերկու տարում զգալի չափով ավելացավ յերկաթուղիների բեռնաշրջանառությունը:

1929 թվականին փոխադրվել էր 156 միլիոն տոնն, իսկ 1930 թվականին՝ 238 միլիոն տոնն բեռ:

1913 թվականին փոխադրվել է 132 միլիոն տոնն բեռ:

Վերջիններ մի այլ ցուցանիշ. նավաորդների փոխադրումը: 1931 թվականին ամբողջ ուսական կայսրություն մեջ փոխադրվել էր 185 միլիոն ճամպորդ, 1928 թվականին 291 միլիոն և 1930 թվականին՝ 557 միլիոն հոգի:

Այդպես ուրեմն, մենք տեսնում ենք, վոր տարեց-տարի զգալի չափով աճում է մեր յերկաթուղիների բեռնափառությունը, բեռնաշրջանառությունը և ապրանքների փոխադրման ասպարիզում: Բեռնաշրջանառություն և ճամպորդների փոխադրման այդ ավելացման չափերի չափադանց ուժեղանում է մեր յերկաթուղիների բեռնափառությունը: Մեզ մոտ, Միության մեջ, 1930 թվ. մի կիլոմետր յերկաթգծին ընկնում էր 1738 հազար տոնն բեռ, Ամերիկայում՝ 1.608 հազար տոնն: Հետևապես մեր յերկաթուղիներն ամենից ավելի լարված աշխատանք են կատարում ամբողջ աշխարհում:

Յեթե հաշվենք յերկաթուղու փոխադրած բոլոր բեռների քանակը, կտանանք 185 միլիարդ տոնն: Ի՞նչ է ցույց տալիս այդ: Յուրջ է տալիս, վոր մենք, 1913 թվականի հետ համեմատած, 2 անգամ ավելացրել ենք մեր յերկաթուղիների ապրանքաշրջանառությունը և 7 տոկոսով զերազանցել ենք 1933 թվականի համար ուրվագծված պլանից:

Մինչպատերազմյան մակարդակի նկատմամբ յեր-

կաթուղիների փոխադրություն այդ աճումն արդյունք է այն հանգամանքի, վոր նախ՝ վերջին յերկու տարում ԽՍՀՄ-ում մենք կառուցել ենք մոտ 12.800 կիլոմետր նոր յերկաթուղի, յերկրորդ՝ ավելացրել ենք յերկաթուղիների փոխադրունակությունը, հիմնելով նոր էլեակայսրաններ, ընդարձակելով հանգույցներն ու կայսրանները, յերկրորդ՝ ավելի լավ ոգտադործելով յերկաթուղիների ուսուրանները, չորրորդ՝ բարելավելով յերկաթուղու աշխատանքի վորակական ցուցանիշները: Որինակ, 1931 թվականին ասլրանքային վագոնը որական կարում էր 72 կիլոմետր տարածություն, 1930 թվականին՝ 93,4 կիլոմետր, ասլրանքատար չոգեկառքը 1913 թվականին որական անցնում էր 119 կիլոմետր, 1930 թվականին՝ 153 կիլոմետր:

Այդ բոլոր ձեռնարկումները մենք իրականացրել ենք միասարաքնների դեմ, տրանսպորտի աշխատանքի բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարի պայմաններում, յերկաթուղային բանվորների լարված աշխատանքով, վորոնք տրանսպորտի ղեկավար աշխատանքի համար կադրեր տվին և գլխավորեցին յերկաթուղային տրանսպորտի աշխատանքը:

Մակայն վորքան էլ բարձրացած լինի մեր յերկաթուղային տրանսպորտի աշխատանքը, այնուամենայնիվ նրա աճման տեմպը չառ հետ է մնում արդյունաբերություն և գյուղատնտեսության աճման տեմպից: Յերկաթուղային տրանսպորտը, իր հետ մնալու պատճառով, դարձել է մեր ժողովրդական տնտեսություն «նեղ տեղը»:

Տրանսպորտը չի հասնում արդյունաբերության և գյուղատնտեսության անման հետևից: Այդ է մեր



տրանսպորտի աշխատանքի հիմնական թերությունը:

Ի՞նչն էր դանդաղեցնում նրա աճման տեմպը:

1) Տեխնիկական վերադիման հետամնացությունը, նրա հիմնական կապիտալի մաշված լինելը:

2) Տրանսպորտում խորն արմատ դրած վնասարար աշխատանքը, վորն այնքի լայն էր զարգացել, քան փոքրին այլ տեղ: Միմիայն վերջին ժամանակներս հաճող-վեց յերեմյան բերել և դուրս վճռել վնասարարների տրանսպորտից, առայժմ դեռ խորապես զգացվում են նրանց աշխատանքի հետեւանքները:

3) Մեր կադմակերպչական աշխատանքի խոշոր թերությունները տրանսպորտում:

Հիմնական թերություններից մեկն է յերկաթուղու ամբողջ աշխատանքի դիմադրելումը: Դիմադրելման հետեւանքն այն յեղով, վոր նվազեց պատասխանատվությունը, ավելացավ թափթիվածությունը, վոչ մի բրիգադ, վոչ մի դժամատ, վոչ մի շրջան պատասխանատու չէր աշխատանքի համար:

Վորո՞նք են մեր յերկաթուղային տրանսպորտի հերթական խնդիրները: Տեխնիկական ներկա բողայի վրա տրանսպորտն այլեւս դարձանալ չի կարող: Դրանից բխում է յերկաթուղային տրանսպորտի վերակառուցման խնդիրը, վորը ծառայել է այժմ մեր առաջ ամենատուր կերպով: ԿԿ-ի պլենումը նչեց յերկաթուղային տրանսպորտի վերակառուցման լայն ծրագիր, վորի առաջատար ողակն է հանդիսանում տրանսպորտի ելեկտրիֆիկացիան:

Տրանսպորտի վերակառուցման խնդիրների հետ միասին ԿԿ-ի պլենումն ուրվագծեց նոր յերկաթուղիների շինարարության և գոյություն ունեցող յերկա-

թուղիների յերթելելությունն ու ժողացնելու ծրագիրը, յեղնելով նրանից, վոր անհրաժեշտ է Սորհրդային Միության յենտրոնների հետ միացնել մի շարք ամենախոշոր նոր արդյունաբերական կոմբինատներ և Միության ինդուստրացող ծախքերիկները:

ԿԿ-ի պլենումը չէր կարող կանգ չստնել այժմ մեր առաջ կանգնած մոտակա խնդիրների՝ մասնավորապես յերկաթուղային տրանսպորտը աշնան և ձմեռվա փոխադրությունների համար պատրաստելու հարցի վրա: Արդեն ամառվա վերջը մեմֆ պետք է նախապատրաստած լինեմք մեր յերկաթուղիներն աշնան և ձմեռվա փոխադրություններին: Մենք մեծ փոխադրություններ ենք ունենալու: Մենք մոտենում ենք այն շրջանին, յերբ սկսվելու յեն հացամթերումները, յերբ մեզ հարկավոր կլինի փոխադրել մի քանի միլիոն փութ հաց: Մեզ անհրաժեշտ է փոխադրել միլիոնավոր տոննա ծուխ ու նավթ և այլն: Այդ բոլորը կանոնավոր աշխատանք է պահանջում յերկաթուղուց: Յերկաթուղային տրանսպորտը պետք է լավ պատրաստված լինի աշնան և ձմեռվա փոխադրություններին: Այն ժամանակ չի կրկնվի այն, ինչ վոր տեղի յեր ունեցել անցյալ ձմեռ:

Աշնան և ձմեռվա փոխադրությունների նախապատրաստումը հանդուժ է գլխավորապես չողեկառուները կարգի բերելուն: Կարգի բերել չողեկառուները, նշանակում է համապատասխան բարձրության վրա դնել չողեկառուների նորոգումը: Այնինչ դա ամենահետամնաց ճակատամասերից մեկն է: ԿԿ-ի պլենումը Հարդուղակցության ճանապարհների ժողկոմատի յերկրային կադմակերպությունների և նորոգման դործարանների համադիութենական միավորման առաջ խնդիր



դրեց՝ շողեկառքեր նորոգող գործարանների աշխատանքը կազմակերպել աշխատանք, վոր նրանք բոլոր շողեկառքերը պատրաստեն աշխատանք և ձմեռվա փոխադրությունների համար: Միության մեջ կան մի քանի տասնյակ աշխատանք նորոգող գործարաններ, սակայն մեկ մոտ, Անդրկովկասում նրանք ավելի վատ են աշխատում, քան վորեն այլ տեղ: Վերջերք Թիֆլիսը: Այդ տեղ կա Ստալինի անվան մեծ գործարան: Այդ գործարանը «անապատան են», թեպետ դոնվում են նորոգման գործարանների համալիրությունական միավորման սխեմայում: Նրանց առաջ դրված են շողեկառք նորոգող գործարանների աշխատանքը բարելավելու հարցը: Յեթե այդ գործարանները ավելի լավ չաշխատեն, քան մինչև այժմ, յեթե նրանց ավելի մեծ նշանակություն չտրվի, քան մինչև այժմ, մենք չենք կարող իրադրծել յերկաթուղիները աշխատանք և ձմեռվա փոխադրությունների համար նախապատրաստելու խնդիրները:

Ուրիշ ի՞նչ հիվանդություն ունի մեր տրանսպորտը, — տնտեսական հաշվարկի բացակայությունը: Մի քանի վայրերում յերկաթուղայինները կարծում են, թե ավելի լավ կարելի յե աշխատել, յեթե չգիտես, թե վորտեղից և ուր են գնալու փողը: Այդպես կառավարելով յերկաթուղային տնտեսությունը՝ հեռու չես գնա: Տնտեսական հաշվարկի արմատացումը մղում են տալիս յերկաթուղային տրանսպորտի զարգացմանը: Այդ պետք են հասկանա ամեն մի յերկաթուղային, տրանսպորտի հետ կապված ամեն մի կազմակերպության ղեկավար: Առանց դրան հնարավոր չե առողջացնել յերկաթուղին: Մենք պետք են տնտեսական հաշվարկի փոխադրենք յուրաքանչյուր գործարան, յուրաքանչյուր

ղեկու, յուրաքանչյուր ուղեմաս, յուրաքանչյուր շրջան:

Ամբողջ տրանսպորտը փոխադրել տնտեսական հաշվարկի, — դա կուսակցության առաջադրած հերթական խնդիրն են: Մենք պետք են իրադրծենք այդ խնդիրը:

Անհրաժեշտ են կանգ առնել նաև մի հարցի վրա, վորը չախաբանց մեծ ազդեցություն են գործում մեր տրանսպորտի աշխատանքի վրա՝ յերկաթուղու կլիենտների հարցը: Յերկաթուղու կլիենտները մենք ենք, բոլորս, տնտեսական և այլ կազմակերպությունները, վորոնք բարձրագույն պահանջում են յերկաթուղուց ճշգրիտ և կանոնավոր աշխատանք: Իսկ իրենք ի՞նչ են անում յերկաթուղու համար: Նրանք բեռներու կամ պարպելու համար ժամանած վազոնների հետ վազում են բոտ իրենց քմահաճույքի, ժամկետից ավելի յեն զբաղեցնում վազոնները, իրար են խառնում սմբողջ աշխատանքը: Մի խոսքով, վարվում են այնպես, ինչպես առաջ վրացի իշխանն եր վարվում՝ կառքի հետ՝ 3—4 ժամով կառք եր վարծում և հրամայում եր՝ քչի՛ր, կամ պատվիրում եր ամբողջ ժամանակ մնալ տեղումը:

Մենք պետք են խիստ կարգապահություն մտցնենք կլիենտների մեջ: Զի կարելի թույլ տալ, վոր բերք ոտացող կազմակերպությունը վազոնը պարպի 20 օրից. վազոնը նույնիսկ 2 ժամ ուշ պարպվելու դեպքում իսխառվում են տրանսպորտի ամբողջ աշխատանքը:

Յեթե տեղական կազմակերպություններն այդպես վարվելու լինեն, ապա յերկաթուղային տրանսպորտի համար շատ դժվար կլինի կատարել իր աշխատանքը:



Մի քանի կլիենտներ ուղղակի մնասարար վերաբերմունք են ցույց տալիս վազոնների և ցխտերների ուսումնադրմանը:

Առանձնապես պետք է ընդգծել կադրերի հարցը: Քանի վոր յերկաթուղային տրանսպորտում նախորդ տարիները մնասարարութունն ամենամեծ չափեր եր ընդունել, կարիք յեղալ հիմնովին մաքրել յերկաթուղին նախկին կայրերից: Մեզ անհրաժեշտ են ինժեներների, տեխնիկների, բանվորների, կադմակերպիչների նոր կադրեր: Ներկայումս խոշոր նշանակութուն ե ըստանում նոր կադրերի պատրաստումը բարձրագույն և միջնակարգ տեխնիկական դպրոցներում: Մինչև այժմ Հաղորդակցութեան Ճանապարհների Ժողկոմատը և մենք քիչ ենք գրադվել այդ հարցով: Դրա հետ միասին մենք պետք ե դրադիներ նաև հին յերկաթուղային բանվորների վերապատրաստմամբ: Այդ աշխատանքը ես վատ հիմքերի վրա յե դրված մեզ մոտ: Յերկաթուղային աշխատողների վերապատրաստումը՝ նրանց առաջ քաշելու համար, թույլ ե ընթանում: Այս յերկու խնդիրները մենք պետք ե լուծենք մոտ ժամանակներս: Այժմ տրանսպորտում կադրերը վորոշում են ամեն ինչ: Յեթե մենք կոմունիստ բանվորների պատրաստված կադրերով հաղեցենք յերկաթուղային տրանսպորտի բոլոր մասերը, ապա ալիլի շուտ կիրականացենք պլանումի առաջադրած խնդիրները:

Մի այլ հարց ե ծաղրած՝ յերկաթուղու վարչութեան կառուցվածքը, շրջանների աշխատանքը: Վերջին տարիներս մենք մեծ միճաբանութուններ ենք ունեցել, թե հարկավոր ե արդյոք ամբացնել շրջանները, հարկավոր ե արդյոք այնտեղ փոխադրել աշխատանքի

ծանրութեան կենտրոնը: Մի քանի կադմակերպութուններ խոչընդոտ եյին հանդիսանում շրջանների ամբացմանը: Կի-ի պլենումն իր վորոշումների մեջ մատնանչեց, վոր հիմնական խնդիրն ե՝ ամբացնել շրջանները, ստեղծել ամուր, լավ կադմակերպված այնպիսի շրջաններ, վորոնց վրա կարողանա հենվել յերկաթուղիների վարչութեանը և Հաղորդակցութեան Ճանապարհների Ժողկոմատը: Ամուր շրջաններ ստեղծելու խնդիրն այժմ կանգնած ե յերկաթուղու առաջ: Այդ խնդիրն անհնարին ե իրադարձել առանց կադրեր պատրաստելու:

Վերջին ժամանակներս կուսակցութունը մճռակաւորեն ձեռնամուխ յեղալ տրանսպորտի շինարարութեանը: Սակայն մենք մինչև այժմ ել չսովորեցինք շարունակաբար, կոնկրետ կերպով դիվալարել բերկաթուղային տրանսպորտի աշխատանքի բոլոր բնագավառները: Որինակ, մինչդեռ տեղական յուրաքանչյուր կադմակերպութուն շարունակ դրադված ե մոչ միայն դործարանի, այլև առանձին ցեխի, առանձին սղրեկատի աշխատանքով, մենք չենք գրադվում շոգեկատրի, յերկաթուղային տրանսպորտի առանձին ողակների աշխատանքի սուղգամբ: Մենք պետք ե միջոցներ գտնենք, վոր կուսակցական կադմակերպութունները տրանսպորտով գրադվեն այնպես, ինչպես գրադվում են այժմ առանձին դործարաններով: Յեթե մենք այդպիսի ուշադրութուն չցուցարերենք, տեղական կադմակերպութուններն իրենց յերեսը չեն դարձնի դեպի տրանսպորտը, մենք չենք կարող հաժաարեցնել սոցիալիստական տրչալի ճոկատի այդ հետ մնացող յայն մասը:



Այդ առնչութեամբ պետք է ասել, վոր իրեն արդարացրեց յերկաթուղում կուսակազմակերպիչներէ հաստատումը, վորոնք զբաղվում են յերկաթուղային մասաներին տրանսպորտի խնդիրներէ շուրջը կազմակերպելու գործով: Սակայն այդ ինստիտուտը պահանջում է, վոր յերկաթուղու կուսակցական կազմակերպութեաններն ամէլի մեծ ուշադրութեան նվիրեն նրան: Կուսակցական կազմակերպիչներէ ստեղծումը չի նշանակում, վոր կուսակազմակերպութեանները չպետք է զբաղվեն տրանսպորտով: Նրանք տրանսպորտով ամէլի պետք է զբաղվեն, քան մինչև այժմ: Նրանք ունեն նոր լծակներ, վորոնց միջոցով կարելի չէ ամէլի լայն ծափել մասսայական աշխատանքը:

Ահա այն հիմնական հարցերը, վորոնք կանգնած են տրանսպորտի ասպարիզում կուսակցութեան առջև, վորոնցով պետք է զբաղվեն բոլոր կուսակազմակերպութեանները վերևից մինչև ներքև, վորպեսզի բռնելով հիմնական ողակները, դուրս հանեն ամբողջ շղթան՝ սպասելով տրանսպորտի զարգացումը այնպիսի տեւպով, վորը պահանջում է յերկրի ինդուստրացման և խոշոր սոցիալիստական գյուղատնտեսութեան արագ անումը:

#### 4. ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՐ ՄԴՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ՈՂԱԿՆ Ե

Հալածարեցնելով մեր սոցիալիստական աշխարհի ճակատը, առաջ քաշելով հետ մնացող ճակատամասերը, կե-ի պլենումը չեր կարող դանց առնել Խորհրդային Միութեան քաղաքային տնտեսութեան հարցը: Յեւ պատահական չէ, վոր հատկապես հնգամյակի 3-րդ տարում

կե-ի պլենումն առաջին անգամն է դնում ամբողջ աշխարհը ամենասուր կերպով: Մեր յերկրի սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումն ավարտելու տարին ահա հանչում է վճարար առաջ մղել քաղաքային տնտեսութեան ամեն տեւպը: Մենք այժմ կիս մոտեցել ենք սոցիալիզմի և բանվորների կիցարի սոց. վերակառուցման կարեւորաշուշն գործընթի յուժմանը: Այդ անհրաժեշտ պայմանն է սրբոյնարեւոյթեան հետադատման և բանվորների գերութեան բարեկալիքի համար:

Ի՞նչ է ներկայ շնում այժմ մեր քաղաքային տնտեսութեանը: Մի հետամնաց տնտեսութեան, վոր ժառանգութեան ենք ստացել չարվածատերերից և կապիտալիստներից. տնտեսութեան, վոր բնավ չի հարմարեցված բանվորների արագորեն աճող նյութական և կուլտուրական կարիքներին բաւարարելու գործին: Հին քաղաքները հարմարեցված եյին կուլվածատերերի և կապիտալիստների պորտաբույծ կյանքին: Այդ քաղաքների տնտեսութեանը չափազանց մաշվել էր իսպերիալիստական պատերազմի և Խորհրդային Միութեան դեմ ուղղված ինտերվենցիայի տարիներին, յերբ բոլորովին կանգ եր առել յինարարութեանը: Քաղաքացիական պատերազմի ժամանակ մի շարք քաղաքներ, ինչպես Յարոսլավլը, կիւլը և ուրիշները տասնյակ անգամ ձեռքից ձեռք եյին անցնում, կործանվում եյին և ավերակների եյին վերածվում: Ուստի մեր առաջին խնդիրն էր՝ վերականգնել այդ քաղաքները: Մենք ձեռնարկեցինք քաղաքային տնտեսութեան վերականգնումը: Վերականգնեցինք հին քաղաքային տնտեսութեանները, անցկացրինք նոր արամվայներ, նոր ջրմուղներ, կոյուղիներ: Մի շարք վայրերում կառու-



ցեցինք նոր քաղաքներ: Սակայն դրանք առաջին քաղաքներն են միայն մեր քաղաքային տնտեսության վերակառուցման ճանապարհին:

Վերականգնած քաղաքային տնտեսությունն այժմ ամենևին չի բավարարում բուն թափով զարգացող արդյունաբերության պահանջներին, չի սպասարկում բանվոր դասակարգի բուն թափով աճող նյութական և կուլտուրական կարիքներին: Քաղաքների աճման տեմպը չի հասնում արդյունաբերության ու բանվոր դասակարգի աճման հետևից, թեպետ քաղաքները աճում են, կրկնապատկվում և նրանք բնակիչների թիվը և կառուցվում են նոր քաղաքներ: Ահա թե ինչու ներկայումս բացառիկ նշանակություն է ստանում հին քաղաքների վերականգնման և նորերի շինարարության խնդիրը: Ներկայումս, յերբ մենք թևակոխել ենք սոցիալիզմի շրջանը, յերբ նոր հսկա դրծարանների շուրջը աճում են նոր քաղաքներ, վերսեղ բնակություն են հաստատում տասնյակ հազարավոր բանվորներ, մենք պարտավոր ենք մտածել քանվորների համար կյանքի լավագույն պայմաններ ստեղծելու մասին:

Այդ խնդիրը լուծելիս մեր առաջ ծառանում են ջրաբանատեխնիկայում, էլեկտրատեխնիկայում, բուսավորական բնակչինարարությունը, ֆաղաֆների օգնիտարական վիճակը, տեղական տրանսպորտը, ֆաղաֆի բարեկարգությունը և նոր ֆաղաֆների շինարարությունը:

Միևեթյան քաղաքներից և վոչ մեկը չի կարող լրիվ բավարարել ջրի այն պահանջին, վոր ներկայացնում են մեծ դրծարաններն ու քաղաքի ազգաբնակչությունը: Այդ հանդամանքը բացահայտորեն դանդաղեցնում և ար-

դյունաբերության հետագա աճումը և բանվոր դասակարգի դրուժյան բարելավումը:

Դրան առթիվ կարելի է բերել հետևյալ թվերը՝ 1926 թվականին Միության բոլոր քաղաքների ջրմուղներն ու լճակնային տալիս էլին 7.500.000 հեկտոյիտոր ջուր, իսկ միայն Նյու-Յորքը որական տալիս էր 14.700.000 հեկտոյիտոր ջուր, մինչդեռ ամբողջ Միության մեջ կա 30% քաղաք:

Բնակարանների վիճակը հետևյալն է՝

Ջնայած վերջին յերեք տարիների մեր կատարած մեծ շինարարությանը, այնուամենայնիվ մեր քաղաքներից և վոչ մեկը բնակարանով չի բավարարում բանվորներին: Ներկայումս Միության մեջ չկա մի քաղաք, վորտեղ բնակարանային հարցը սուր բնույթ չունենա: Մարդիկ ամիսներով, յերբեմն ել տարիներով բնակարանի յեն սպասում, և դա այն պատճառով, վոր քաղաքների ազգաբնակչությունը շատ ավելի արագ և աճում, բան բնակարանային տարածությունը:

Քաղաքների սանիտարական դրուժյունը զգալի չափով դեմ է առնում կոյուղու կառուցմանը, բաղնիքների, լվացատների և նման հաստատությունների կառուցմանը:

1900 թվականին Ռուսաստանում կոյուղի ունեւ միայն 5 քաղաք, 29-30 տարում Նոր-Յորքային Միության մեջ կոյուղի ունեյին 28 քաղաք, իսկ մյուս քաղաքները չունեյին:

Այժմ բաղնիքի հարցը շատ քաղաքներում դառնում և մեծ պրոբլեմ: Հնարավորություն չկա ամբողջ ազգաբնակչությանն սպասարկել բաղնիքով: Իսկ սոցիալիստական քաղաքի կուլտուրայի աճումը պահանջում է այդ:



Առանձնապես պետք է կանգ առնել տրամվայի հարցի վրա:

Ի՞նչ ունենք մենք այժմ մեծ քաղաքներում: Մենք բան չունենք նկուղներից փոխադրելի քաղաքացիների զորավաճ ընակարանները: Այդ ընակարանները գտնվում են կենտրոններում, իսկ դործարանները՝ ծայրամասներում: Բանվորը տրամվայ նստելու համար օգտագործում է մի քանի ժամ կորցնել, հերթի կանգնել, վերադառնալու մեր տրամվայները հնարավորություն չունեն հակադարձ թիվով ճամպուղներ փոխադրելու:

Յեթն տրամվայի յուրաքանչյուր վագոն տարեկան մեկնի հաշվով պետք է փոխադրել 200-300 հազարով ճամպուղի, սակայն մեր վագոնները ներկայումս փոխադրում են 600-700 հազար ճամպուղի: Որինչպի՞ր բաղվում տրամվայի վագոնների բեռնվածությունը կազմում էր 160 տոկոս:

Յեթն վերցնենք մեր քաղաքների եննոդետիկ տնտեսության հարցը, պետք է տեսնել, վոր քաղաքների դերակազմող մեծամասնությունը լրիվ չի ապահովված ելեկտրական և ջերմային եննոդետիկայով:

ԽՍՀՄ-ի քաղաքային տնտեսության զարգացման հետ կապված յուրաքանչյուր հարց, այժմ հանդիսանում է տնտեսական և քաղաքական խոշորագույն խնդիր: Այն պայքարը, վոր մղվում է սոցիալիստական շինարարության հետադու հաջողությունների համար, աշխատավորության նյութական և կենցաղային պայմանները բարելավելու համար, ներկայումս հանդիմ է ընակարանի, ջրահայթի, ջրամուղի, լուսավորությանը, կոյուղուն, քաղաքային տրանսպորտին, բաղնիքին, լվացքատներին, հանրային սենյին, ծառատնկմանը:

Պարզ էրևում կուսակցության յերեսը դեպի քաղաքա-

յին տնտեսությունը, ԿԳ-ի պլենումը մեր առաջ մարտահան խնդիր դրեց այն ե՛ւ ամենաարագ թափով վերացնել քաղաքային տնտեսության հետամնացությունը սոցիալիստական շինարարության ընդհանուր դարգացումից: ԿԳ-ի պլենումը քաղաքային տնտեսության վճռական բարելավման և նոր սոցիալիստական քաղաքների շինարարության դործնական կոնկրետ ծրագիրը սերտորեն մշակեց աշխատավոր մասսաների կենցաղը սոցիալիստական մոր հիմունքներով վերակառուցելու խնդրի հետ, քաղաքի և գյուղի հակադրության վերջնական վաշնչացման մոտեցումով համգամանքի հետ:

Քաղաքային տնտեսության դարգացման հարցը հանդիմ է կադրերի հարցին: Քաղաքային տնտեսությունն այն անկյունն է, վորի վրա մինչև այժմ ընկնում է հայտնի գլուխը: Տնտեսության այդ ընդհանրագումարում մեր կադրերը սակավաթիվ են: Այժմ մենք պետք է պրագվենք այդ կադրերը պատրաստելու հարցով, կոմունիստներից, կոմյունիստականներից և բանվորներից քաղաքային տնտեսության համար աշխատողներ պատրաստելու նպատակով ԲՈՒՀ-եր ու տեխնիկումներ ստեղծելու հարցով: Յեթն պրոդետարիատի դիկտատուրայի սխեմում դորդություն չունենա այն ապարատը, վորի միջոցով կուսակցությունը չընդարձակաւորի քաղաքային տնտեսության բարելավման ամբողջ աշխատանքում, մենք չենք կարող շատ բան տեսնել: Ուստի ԿԳ-ի պլենումն անհրաժեշտ դրամով ստեղծել նոր ժողովուրդ՝ կոմունիստ տնտեսության ժողովուրդ:

1. Քաղաքային տնտեսությունը



5. ԱՆԻՐԿՈՎԱԿԱՍԻ ԲԱՅԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԻ  
ՀԵՐԹԱԿԱՆ ՈՂԱԿՆԵՐԸ ԿԿ-Ի ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈ-  
ՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՍՊԱՐԻՋՈՒՄ

Զի կարելի ամփոփել ՀամԿ(բ)Կ-ի ԿԿ-ի պլենումի  
արդյունքները, առանց ասելու, թե ինչ խնդիրներ են  
բղիտում այդ պլենումի վորոշումներից Անդրկովկասի  
կուսակցական կազմակերպությունների համար:

Մեր առաջ կանգնած առաջին և հիմնական խնդիրն  
է՝ սանել ԿԿ-ի պլենումի վորոշումները դեպի մասնա-  
ները և կազմակերպել այդ վորոշումների շուրջը բոլոր  
բանվորներին ու կոլտնտեսականներին:

Յերկրորդ խնդիրն է՝ բոլոր անհրաժեշտ հետեւու-  
թյուններն անել կուսակցության ԿԿ-ի պլենումի վորո-  
շումներից և այդ վորոշումների հիման վրա մշակել  
բոլոր անհրաժեշտ գործնական ձեռնարկումները:

Ի՞նչ արդյունքներ ունենք մենք մեզ մոտ՝ Անդր-  
կովկասում՝ կոլեկտիվացման ասպարիզում: Ի՞նչպե՞ս  
կարողացանք իրագործել այն առաջադրանքները, վոր  
տվել է մեզ կենտկոմը, ի՞նչպե՞ս զլխավորեցիք մենք  
Կոլտնտեսական շարժումը:

Այս դարձան արդյունքները ցույց են տալիս, վոր  
Անդրկովկասի և առանձին հանրապետությունների կոլ-  
տնտեսական շարժման ասպարիզում, չնայած առան-  
ձին սխալներին, մի քանի վերադարձներին և վորոշ վա-  
րերում վերադարձ թույլ զեկաւարությունը, մենք կա-  
րողացանք զլխավորել Կոլտնտեսական շարժումը և  
մեծ նվաճումներ ձեռք բերինք:

Մինչև հունիսի սկիզբը Անդրկովկասում կոլեկ-  
տիվները միացրել են տնտեսությունների ընդհանուր

ԽՎԻ ալելի քան 35 տոկոսը, իսկ բամբակագործական  
շրջաններում՝ տնտեսությունների ընդհանուր ԽՎԻ ա-  
լելի քան 50 տոկոսը:

Ազրբեջանում մինչև հունիսի 1-ը կոլեկտիվները  
միացրել են տնտեսությունների ալելի քան 38 տոկոսը,  
իսկ բամբակագործական շրջաններում՝ 53 տոկոսը:  
Վրաստանում՝ 36 տոկոսը, իսկ բամբակագործական  
շրջաններում՝ 45 տոկոսը: Հայաստանում՝ 24,5 տո-  
կոսը, իսկ բամբակագործական շրջաններում՝ 40 տո-  
կոսը: Այդ բոլորը նշանակում է, վոր մենք արդեն գե-  
րապանցել ենք կուսակցության կենտկոմի վորոշմամբ  
ուրվագծված կոլեկտիվացման տեմպից: Անդրկովկասի  
բարդ պայմաններում կուսակցական կազմակերպու-  
թյունները կարողացան զլխավորել Կոլտնտեսական  
շարժումը և տանել վերջինս ճիշտ ուղիով: Կոլեկտիվ  
շարժման այդ հաջողությունները մեզ հնարավորու-  
թյուն են տալիս այս տարվա աշնանը, համեմայն դեպս  
վոչ ուշ քան 1932 թվականի գարնանը, հիմնականում  
ավարտել համատարած կոլեկտիվացումը բամբակա-  
գործական շրջաններում:

Կոլտնտեսական շարժման ղեկավարություն ասպա-  
րիզում մեր կուսակցական կազմակերպությունների  
ձեռք բերած վորո՞ք յերաշխիք է, վոր մյուս տարի մենք  
կկաբողանանք ալելի մեծ քայլեր անել դեպի առաջ,  
ԱՍՅՈՒՆ-ի մյուս շրջաններում ևս կոլեկտիվացման հե-  
տագա առման ուղղությամբ:

Մեր խնդիրն է կոլեկտիվացման ասպարիզում ձեռք  
բերված նվաճումներն ամրացնել գործաւարձի կիրառու-  
մամբ, աշխատանքի ճիշտ կազմակերպմամբ և կոլտն-  
տեսականներին այս կամ այն աշխատանքին ամրացնե-



լով, հաշվառամբ, աշխատանքի կազմակերպածութեամբ և յեկամուսնների ճիշտ բաշխմամբ: Դա կամրացնի դոկտօրական ունեցող կոլտնտեսութեանները և անհատական ջրամբարական ու միջակների նոր հոսանք կրուտեղծի դեպքի կոլտնտեսութեանները:

Խոսելով կոլեկտիվացման ասպարեկում մեր առաջ դրված խնդիրների մասին, պետք է մատնանշել Հայաստանի հետ մնալը ԱՍՖՈՀ-ի մյուս պետութեանների հետ համեմատած: Նույնիսկ բամբակադործական շրջաններում Հայաստանի կոլտնտեսական շարժումը մյուս հանրապետութեաններից ցածր է: Յեթե Ադրբեջանի բամբակադործական շրջաններում կոլեկտիվացումը կազմում է 53 տոկոս, Վրաստանում՝ 46 տոկոս, ապա Հայաստանում՝ միմիայն 40 տոկոս: Այդ վկայում է, փոր Հայաստանի կուսակցական կազմակերպութեանները դեռևս չեն կարողացել լրիվ կազմակերպել մասսաներին կոլտնտեսութեանների համար մղվող պայքարի շուրջը և հաղթահարել կուլակոթյան դեմադրութեանը:

## ՄԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵ-

### ՍՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻՋՈՒՄ

Հիմնական հարցը բամբակն է: Այս տարի բամբակը նվաճել է իր տեղը: Մինչևի այս տարի Ադրբեջանում, Վրաստանում և Հայաստանում վիճարանութեաններ, տատանումներ կային այն հարցի շուրջը, թե ի՞նչ չափով է ի՞նչ տեմպով պետք է զարգացնել բամբակադործութեանը: Այս տարի բոլոր կազմակերպութեաններում բեկում կատարվեց: Անդրկովկասի բոլոր կուսակցական կազմակերպութեանները ձեռնամուխ յեղան

բամբակին և դուրսացին սկսեց բամբակ ցանել: Նույնիսկ Վրաստանում և Հայաստանում, փորտեղ բամբակը մինչև այժմ չատ չէր տարածված, 20-25 հազար հեկտարի պլանը լրիվ իրագործվեց: Այդ մեզ ապահովութուն է տալիս մյուս տարվա համար: 1932 թ. վերջնականապես կամրացնի բամբակի նվաճած դիրքերը: Վոր բամբակը համապատասխան տեղ է դրավել, վկայում են հետևյալ թվերը՝ Անդրկովկասում մենք ցանել ենք 266 հազար հեկտար բամբակ, պլանի 250 հազար հեկտարի փոխարեն: Այս տարի մենք չատ լավ դուրս բերինք հերին ու ցանքը: Բոլոր կուսակցական կազմակերպութեանները մոբիլիզացիայի յենթարկեցին, բաշխեցին իրենց ուժերը դուրսբերում և կարողացան փութի համեմատ գլխավորել դուրսացիական մասսային:

Հաջորդ գլխավոր և հիմնական խնդիրը բամբակի մշակումն է: Ցանքի ասպարեկում մեր ունեցած մեծ հաջողութեաններից հետո բամբակի մշակումը կազմում է հետ և մնում: Այդ բացատրվում է նրանով, փոր չատ վայրերում սկսվել է գեմորիլիզացիոն տրամադրութեան: Ժամանակին շրջադարձ չկատարեցին դեպքի մշակումը, ժամանակին չզբաղվեցին դրանով: Դրա մասին ամեն ոք ազդեցություն են մեր բոլոր թերթերը, հանրապետութեանների մեր ղեկավար կազմակերպութեանները: Մենք պետք է կտրուկ շրջադարձ կատարենք դեպքի բամբակի մշակումը: Խուսական մի առած կա, փոր ասում է՝ «Ինչ կցանես, այն կհնձես»: Այդ առածը բամբակի համար անդործադրելի չէ, փորովհետեւ կարելի չէ չան ցանել, բայց չատ քիչ քաղել, յեթե ցանված արտերը չմշակվեն: Բամբակի վերաբերմամբ այդ առածը այժմ էս և ձևակերպվում՝ «Ինչ մշակես, այն կհայաքես»: «Յեթե բամբակը մշակես, բերք կառա-



հաս, յեթե չմշակես, ամեն ինչ կկորցնես»։ Այժմ մենք շատ ենք կաղում բամբակի մշակման ասպարեղում։ Հանրապետական ֆեդերատիվ և շրջանային կազմակերպությունների խնդիրն է՝ կրտսուկ շրջադարձ կատարել գետի բամբակի մշակումը։ Այն շրջաններում, վորտեղ գլխապառլյոտ է տիրում ցանքի հանդուրժյուններից, պետք է բոլոր աշխատողներին արագորեն փոխադրել մշակմանը։ Մենք առաջ ենք դնում ուշացումով, ուստի այժմ, մշակման յետուն շրջանում, մենք պետք է կարողանանք անել աշխատ, վոր մեր աշխատանքի կորագիծը միշտ գետի վեր գնա։

Սակայն առաջ տանելով բամբակի մշակումը, մենք չենք կարող մոռանալ բերքահավաքի կամպանիայի պատրաստության մասին։ Դուք բոլորդ ել գիտեք, թե ինչպես դժվար էր հավաքել բամբակն անցյալ տարի, յերբ մենք պետք է հավաքեյինք 140.000 հեկտար փաստական ցանք։ Այս տարի մենք պետք է քաղենք 260.000 հեկտար բամբակ։ Անհրաժեշտ է ժամանակին կազմակերպել փոխադրումը, ամբարները և ալլն, փորպետի վոր մի փութ հում բամբակ չկորչի։

Մշակման և բերքահավաքի հետ միաժամանակ պետք է նախապատրաստություններ տեսնել առաջիկա տարվա ցանքի համար։

Հունիսի սկզբին մենք առաջիկա տարվա համար կազմակերպեցինք 435 հազար հեկտար բամբակի պլան։ Ինչո՞ւ հունիսի սկզբին արինք այդ։ Վարովհետեւ մշակելով այս տարվա ցանքը, պատրաստվելով բերքահավաքին, մենք միաժամանակ ամառվա և աշուն ընթացքում պետք է պատրաստենք հոգը 1932 թվի ցանքի համար։ Ուշ կլինի, յեթե մենք ցանքի պատրաստությունը տեսնենք 1932 թվականի հունվարին—փետրվարին։

Երբ աշխատանքով մենք պետք է զբաղվենք այժմ։ Այն ժամանակ մենք կկարողանանք կազմակերպել Անդրկովկասում 435 հազար հեկտար բամբակի ցանք։

Մշակման լավ աշխատանքը, բամբակի բերքահավաքի լավ աշխատանքը, առաջիկա տարվա ցանքի նախապատրաստական լավ աշխատանքը կողքի կոլեկտիվացման գործին, նոր հոսանք կստեղծի գետի կոլտնտեսությունները, հնարավորություն կտա հիմնականում ավարտել համատարած կոլեկտիվացումը բամբակահորձական շրջաններում։ Վորպես այս տարվա աշնան և 1932 թվականի գարնան արդյունք, մենք պետք է վնասակա հաղթանակներ տանենք ԱՍՖՆՀ-ի քաղաքագործական շրջանների կոլեկտիվ շարժման ասպարեղում։

Գյուղատնտեսության բնագավառում մեր կատարած աշխատանքի յերկրորդ սղան է Թեյը։

Յեթե նորհրդային Միության բամբակի անկախության համար մղվող պայքարը լուծումն է ստանում Ուղբեկտանի, Ղաղախտանի, Թուրքմենստանի, Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի և Ուկրայնայի բամբակագործական շրջանների դաշտերում, ապա Թեյի ասպարեղում ԱՍՖՆՀ հանդիսանում է վնասկան շրջան, վորը կարող է դարձնել մեր Միությունը Թեյի անկախ յերկիր։ Անդրկովկասի սեծովյան սղր և Լենգրանի շրջանը կարող են տալ 150 հազար հեկտար Թեյի սղանտացիա։

Այս տարի մենք վատ էյինք կազմակերպել այդ գործը։ Վրաստանի կոլտնտեսական կազմակերպությունները չկարողացան աշխատանք ծավալել Թեյի շուրջը յիշպես մենք պայքար ծավալեցինք բամբակի համար։ Թեյը գետես չի դարձել այն փորձաքարը, վորով կարելի լինի



ստուգել հղուրդեթի, Զուգլիդի, Յարենջիսի, Լանչ-  
խութի և Դալի չըջանի բաղլեկեների կատարած աշ-  
խատանքի մարտական տեմպը թեյ տնկելու, թեյի  
գործը կազմակերպելու ստպարիզում: Այդ հարցերը  
բաղլեկենիներն չեն առաջադրվել, ուստի Վրաստանի  
թեյի չըջաններում աշխատանքը կատարվում էր  
գանդաղ, ինքնահոսով: Դրա շնորհիվ մենք մեր պլան-  
ները կատարեցինք՝ միմիայն 77 տոկոսով: Իսկ պլան-  
ներ կատարելու հնարավորություններն ունեյինք:  
Այլևս այդպես չի կարելի աշխատել: Մենք պետք է կա-  
րողանանք մոռելիզացիայի յենթարկել մեր ուշադրու-  
թյունն ու միջոցները, վորպեսզի Անդրկովկասում ա-  
մենակարճ ժամանակամիջոցում թեյի պլանտացիաների  
տարածությունը հասնի 150.000 հեկտարի:

Անդրկովկասի գյուղատնտեսության մեջ մեծ տեղ  
և դրամում ծխախոտը: Սակայն այդ ստպարիզում մենք  
չենք կարող պարծենալ մեծ հաջողություններով: Մենք  
չկարողացանք կենտրոնացնել կուսակցական կազմակեր-  
պությունների ուշադրությունը ծխախոտի շուրջն այն-  
պես, ինչպես բամբակի շուրջը: Մենք չկարողացանք  
ծխախոտի պլանը կատարելու համար մղվող պայքարը  
գնել աշխատի հիմքի վրա, ինչպես բամբակենիներ:  
Մենք չառեցինք՝ «ծխախոտ տնկելը բաղլեկենիների  
ստուգումն է»: Յեվ արդյունքը՝ մինչևի հունիսի 20-ը  
պլանը կատարվել է միայն 60 տոկոսով:

Անդրկովկասում ցանվելիք 30 հազար հեկտար ծխա-  
խոտի ընդհանուր պլանից Աբխազիային ընկնում է  
19,5 հազար հեկտար: Այդպիսով ծխախոտագործու-  
թյան ստպարիզում ստաջնատար ոլակն է Աբխազիան:  
Սակայն տեղական կուսակցական կազմակերպությունը,  
բամբակի համար մղվող պայքարին ուղարկունիտական

վերաբերմունք ցույց տալու շնորհիվ, չկարողացավ կա-  
տարել իր պլանը:

Այդ դասերը կուսակցական կազմակերպություն-  
ներին պետք է սովորեցնեն, վոր չի կարելի այդպես վե-  
րաբերվել բամբակին, վորը հանդիսանում է մեր աշխա-  
տանքի տնտեսական մեծ բնագավառը: Մեր պայքարի  
Ֆրոնտի ծխախոտի ճակատամասում առաջացած ճեղք-  
վածքը զուր չպետք է տեսնի:

Մենք հաճախ կրկնում ենք, վոր Անդրկովկասի  
գյուղատնտեսության հիմնական հյուղը պետք է դառ-  
նան սուբսորուկի մշակութիները: Սակայն այժմ դեռ  
ցանում ենք ե՛ր ցորեն, ե՛ր յեզիպոտացորեն, ե՛ր գարի:  
Բայց ի՞նչ վիճակի մեջ է մեզ մոտ հացարույանքի  
ցանքը:

Թեպետ այս տարի մենք ամիլի յենք ցանել, քան  
անցյալ տարի, սակայն այս տարվա պլանը վոչ մի հան-  
րապետություն լրիվ չի կատարել: Մինչևի հունիսի  
20-ը Անդրկովկասում ցորենի պլանը կատարված է 82  
տոկոսով, յեզիպոտացորենինը՝ 72 տոկոսով:

Ինչո՞ւ հացարույանքի ցանքի պլանը լրիվ չկատար-  
վեց: Արդյոք հո՞ղ էր սրահա, սերմացո՞ւ, թե՞ աշխա-  
տավոր ձեռք: Վոչ, այդ բոլորը կաք, սակայն մենք  
չկարողացանք կազմակերպել այդ գործը, ոյդ գործի  
վրա քիչ ուշադրություն դարձրինք մենք, սկսած  
Յերկրային Կոմիտեից և կենտրոնական կոմիտեներից  
մինչև չըջանային ու գյուղական կազմակերպություն-  
ները: Մենք դեռ չենք սովորել ղեկավարել միաժամա-  
նակ աշխատանքի բոլոր բնագավառները: Մեզ մոտ դեռ  
տիրում է հերթականության պրակտիկա՝ դրավում ենք  
բամբակով, մոռանում ենք թեյը, դրավում ենք



թէյսի, մոռանում ենք ծխախոտը, դրադիւմ ենք ծխախոտով, մոռանում ենք ցորենը, դրադիւմ ենք ցորենով, մոռանում ենք բանջարանոցները: Մենք դեռ չենք սովորել բոլոր թիւերը կապել մի հանդույցի և ճիշտ դասավորել մեր ուժերը, առաջ գնալ բոլոր բնագավառներում միաժամանակ: Մենք պետք է հրաժարվենք այդ պրակտիկայից: Դրա մասին մենք խոսել ենք խորհուրդներին անդրկովկասյան համագումարի Փրակցիայում: Յերեվանից, յեթե մենք մի ամիս դրադիւմ ենք բամբակով, մի ամիս ծխախոտով և այլն, և այլն, դպրակ յեթե նոյնիսկ 365 որ շարունակ ցանք անենք, չենք հասցնի, մանավանդ, յեթե զանազան մշակույթների ցանքի մշակման և բերքահատիւների ժամանակաշրջանները զուգարկում են իրար: Այդ է պատճառը, վոր այնքան կարեւոր ու անհրաժեշտ է ժամանակին և լիով կատարել մեր աշխատանքի բոլոր ճակատամասերի, բոլոր ճյուղերի պլանները:

Եռաժանութիւն անասնաբուծութեան պրոբլեմը, յես այստեղ կանդ չեմ անի այն հարցի վրա, թէ ինչպիսի նշանակութեան ունի յոցիալիստական անասնաբուծութեան կադմակերպումը աշխատավորութեան լայն մասաների համար, պարենաւորման ու հայեալթման դժուարութեանները վերջնականապէս վերացնելու համար: Այժմ յես ուզում եմ ընդգծել այդ պրոբլեմի մյուս կողմը: Կարո՞ղ է արդյոք խոսք լինել կոլտնտեսութեանների լծկանների մասին, մթերատու անասունների մասին, յեթե մեր կոլեկտիվ տնտեսութեանները կեր չունենան: Իհարկէ վոչ: Այստեղից պետք է անել հիմնական հետեւութեան: Խոտհումքի և կերի պատրաստման խնդիրը բացառիկ նշանակութեան է ստանում անասնաբուծութեան զարգացման համար:

Խորհրդային ու կոլեկտիվ տնտեսութեաններն առաջ կերի և մասնավորապէս սիլոսային ռեսուրսների չեմ կարող բարձրացնել և կազմակերպել սոցիալիստական անասնաբուծութեանը:

Մինչեւ այս տարի մենք Անդրկովկասում, ինչպէս հարկն է, չենք դրադիւմ խոտհումքի կադմակերպութեանը: Դարեանք մենք ընդգծեցինք այդ աշխատանքի կարեւորութեանը: Կադմակերպել պլան: Մոտ մեկ և կես ամիս արավուր մամուլում շեշտեցինք, վոր պետք է կադմակերպել խոտհումքի ու խոտահատիւների դործը, սակայն դրանով էլ վերջանում է մեր աշխատանքը:

Ի՞նչ ունենք մենք այսօր: Փոխանակ պլանում նախատեսված 700.000 հեկտար խոտի, մենք քաղեցինք 60.000 հեկտ. մի քիչ ավելի: Աղբրեշանում 387.000 հեկտարից քաղվեց ընդամենը 47.000 հեկտ., այսինքն 12 տոկոս, Վրաստանում՝ 200.000 հեկտարից քաղվեց 13.000 հեկտար, այսինքն 6,5 տոկոս, իսկ Հայաստանում՝ ավելի քիչ: Ի՞նչ է ցույց տալիս այդ: Ցույց է տալիս այն, վոր մեր ջրջանները դեռ չեն ակսել շարժվել, դեռ մարտականորեն ձեռնամուխ չեն յեղել այդ դործին: Իսկ խոտը կորչում է: Այդ դրութեանը միանդամայն անհանդուրժելի յէ, պետք է անհապաղ քեկում ստեղծել խոտահատիւների կադմակերպութեանը:

Կա դուրաւտնտեսութեան մի ճյուղ ևս, վորով լըրջորեն պետք է դրադիւմ կուակադմակերպութեանները: Դա շերամապահութեանն է: Այդ բնագավառում շատ թույլ է ծավալվում մեր աշխատանքը: Այս տարի մենք պէտք է հավաքենք 7500 ցեղաւ. բոժոժ: Սակայն համարյա վոչմիտ չլինի, թէ ինչպէս և կադմակերպված չեմք միջոցների բաժնումն ու անումը: Նոյնիսկ Մոտ-



ժողովմասոր չդիտե, թե մինչև այսօր վորքա՞ն բոժոժ  
ե հալնաքլած: Այդ ցույց ե տալիս, թե ինչպես ենք  
աշխատում մենք այդ ասպարիզում, ցույց ե տալիս,  
վոր մենք դեռ չենք հասկացել շերամապահության դե-  
րն ու նշանակությունը սպառման առարկաներ ուր-  
տադրող թեթե արդյունաբերության զարգացումն ա-  
րագացնելու գործում:

Գյուղատնտեսության ասպարիզում այժմ մեր ա-  
ռաջ կանգնած բոլոր խնդիրները հանգում են գյուղա-  
կան բջիջների և գյուղխորհուրդների աշխատանքին:  
Գովառները վերացնելուց հետո մենք ամբարցրինք  
չրջանները: Մեր չրջանային կադրերն աճեցին, մեծ  
փորձառություն ձեռք բերին: Այժմ մեր խնդիրն է  
ափելի ցած իջնել, ստեղծել գյուղական ամուր կուսակա-  
ցակերպություն, գյուղխորհուրդ և աշխատողներ տալ  
գյուղին: Այլապես մենք չենք կարող իրագործել այն  
լուրջ խնդիրները, վորոնք ծառացած են մեր առաջ  
գյուղատնտեսության սոցիալիստական վերակառույց-  
ման ասպարիզում:

Գյուղական բջիջներն ու գյուղխորհուրդը պետք է  
կազմակերպեն կոլտնտեսական մասնային և անհատա-  
կան չքավորներին ու միջակներին՝ մարտականորեն  
կիրառելու մեր բոլոր հերթական խնդիրները, հաղ-  
թահարելու կուլակության դիմադրությունը:

#### ԿԻՊ ՄՈՏԵՆԱԼ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

Վերջին ամիսները մենք կիպ մոտեցանք տրանսպոր-  
տին, մորելիգայիայի յենթարկեցինք կուսակազմակեր-  
պության ուղադրությունը յերկաթուղու հերթական  
խնդիրների շուրջը: Յեպ պետք է առել, վոր մենք վո-

րոչ հաջողություն ձեռք բերինք: Անդրկոմկատի մեր  
յերկաթուղին աչքի յե բնկնում Միության մշտն յեր-  
կաթուղիների շարքում: Այդ նվաճումները կարող են  
դիտարարույտ առաջացնել առանձին աշխատողների  
մոտ, նրանք կարող են հանդատանալ ձեռք բերված  
հաջողություններով և թերապահատել տրանսպորտի  
խնդիրների ամենալուրջ նշանակությունը: Այդ կնշա-  
նակել հսկայական վնաս հասցնել մեր աշխատանքին:

Տրանսպորտի ասպարիզում ցուցաբերվող կուսակ-  
ցական դեկալիարությունն այն չէ, վոր մենք նշանա-  
կենք կուսկազմակերպիչներ և նրանք պատանխանառու  
լինեն տրանսպորտի աշխատանքի համար: Պետք է մի-  
ջոցներ դառնել, վոր յուրաքանչյուր կուսակազմակեր-  
պության ափելի մոտենա տրանսպորտի արհանձններին  
ու կարիքներին, յերկաթուղային տրանսպորտի հարցե-  
րով զբաղվի այնպես, ինչպես զբաղվում են գործարա-  
նի, հանքահորի, խորհրտնտեսության, ՄՏԿ-ի աշխա-  
տանքով, կապելով տրանսպորտի աշխատանքը չրջան-  
ների տնտեսական դարգացման ընդհանուր խնդիրների  
հետ, թափանցելով յուրաքանչյուր բրիգադի, յուրա-  
քանչյուր շոգեկառքի, առանձին կաշարանի հանդույ-  
ցի, դեպոյի աշխատանքի մեջ: Թեթե մենք ալոպիսի  
հիմքի վրա դենք աշխատանքը, կկարո՞ղանանք իրա-  
դարծել ԿԿ-ի պլենումի վորոշումները, կիպ ձեռնամուխ  
կլինենք յերկաթուղու վերակառուցմանը, մարտակա-  
նորեն կկատարենք աշխան և ձմեռվա փոխադրումնե-  
րը, կբարելավենք տրանսպորտի նյութական — անխի-  
կական հայթայթումը, դարկ կռանք շոգեկառքի յու-  
րոգմանը, կարմատացնենք յերկաթուղում տնտեսական  
հաղթարկը, խիստ կարգապահություն կհաստատենք  
կրիկներն և վերաբերմամբ:



ՅԵՐԵՄՆԵՐՍ ԴԵՊԻ ԲԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵ-  
ՍՈՒԹՅՈՒՆԸ

Մեզ մոտ՝ Անդրկովկասում քաղաքային տնտեսու-  
թյունը դեռևս աշխատանքի անձեռնամուխ չյուզ է։  
Մեզ մոտ չկա նույնիսկ այնպիսի կազմակերպություն,  
վորը կարողանա պարզ պատմել, թե ինչ վիճակի մեջ  
են մեր քաղաքները, ինչպես են զարգանում որանք։  
Անդրկովկասում միակ քաղաքը, վորը 1927 թվականից  
հետո վորոշ վերակառուցման է յենթարկվել՝ Բաղու-  
ն է։ Այնտեղ կառուցվեց երկկտրաբարչ յերկաթուղի,  
արամիայ, ջրմուղ։ Սակայն ի՞նչ վիճակի մեջ է ներկա-  
յումս Բաղվի քաղաքային տնտեսությունը։ Բնակարա-  
նային տարածությունը քիչ է դալիս, քաղաքի աղքա-  
քնակությունն ավելանում է, բնակաշինարարությունն  
ածում է, ջուրն ու երկկտրական եներգիան պակասում  
է։ Քաղաքի բարեկարգությունը վատ վիճակի մեջ է։  
Ծառատնիքան բնադավառում, քաղաքի չուրջը ամա-  
ռանոցներ կառուցելու ասպարիզում, վորտեղ բանվոր-  
ները կարողանալին հանգստանալ, — մենք հետ ենք մը-  
նում։ Մենք դեռ կիս չենք մոտեցել Բաղվի բանվոր-  
ների կենցաղի սոցիալիստական վերակառուցմանը։

Յեթե ԿԿ-ի պլենումը սուր կերպով առաջադրեց  
Մոսկվան ինդհդալին Միություն իսկական օրինակե-  
լի մայրաքաղաք դարձնելու հարցը, մենք Անդրկովկա-  
սում պետք է նախ և առաջ զբաղվենք Բաղվով, վերա-  
կառուցենք նրա քաղաքային տնտեսությունը՝ բանվոր  
դասակարգի նյութական ու կուլտուրական կարիքնե-  
րին բավարարելու նպատակով։ Պետք է զբաղվել նաև  
այլ քաղաքներով։ Անդրկովկասի մայրաքաղաքի՝

Թիֆլիսի քաղաքային տնտեսությունը դեռ նույնիսկ  
վերականգնման չըջանից դուրս չի յեկել։ Թիֆլիսում  
վատ վիճակի մեջ է կոյուղին, ջուրը քիչ է, սալահա-  
տակները քայքայված են։ Մի շարք տներ քանդվում են։  
Ի՞նչ վիճակի մեջ է քաղաքային տնտեսությունը վեր-  
ջին տարիներս բուռն թափով աճող քաղաքներում՝ Յե-  
րեվանում, Գյանջայում, Բաթումում, Լենինականում։  
Յերեվանում 1912 թվականին կար 29.000 բնակիչ,  
իսկ այժմ կա 89.000 բնակիչ։ Գյանջայում կար 42.000  
բնակիչ, իսկ այժմ՝ 74.000։ Լենինականում կար 10  
հազար բնակիչ, իսկ այս տարի 52.000։ Բաթումում՝  
Բաղվի այդ փոքրիկ ճյուղում՝ հիմնվում են նավթու-  
ղտիչ դործարաններ։ Այդ բոլոր քաղաքներում հալար-  
ներով ավելանում է բանվորների թիվը։ Առաջ են դա-  
լիս արդյունաբերական նոր կենտրոններ։ Այդ քաղաք-  
ներում մենք հարկադրված ենք ստեղծել կոմունալ նոր  
տնտեսություն։ Կկարողանանք արդյո՞ք մենք կիս մո-  
տենալ ԱՍՖՍՀ-ի քաղաքային տնտեսության բարե-  
լավման դործնական ձեռնարկումներին և զբաղվել դը-  
րանցով։ Կկարողանանք, սակայն միմիայն այն դեպ-  
քում, յեթե ճիշտ բաշխենք մեր ուժերն ու միջոցները։  
Անդրֆեդկայայի օրգաններն առաջին հերթին պետք  
է ողնեն Բաղվին և Թիֆլիսին։ Մյուս քաղաքների հա-  
մար նախ և առաջ պետք է կազմակերպել տեղական  
կազմակերպությունների նախաձեռնությունը։

Սակայն Բաղվի և Թիֆլիսի համար էս, բայց այն  
ոգնությունից, վոր կկարողանան հասցնել անդրկով-  
կասյան ու հանրապետական օրգանները՝ նրանց քա-  
ղաքային տնտեսության վերակառուցման ու զարգաց-  
ման ասպարիզում, անհրաժեշտ է ամեն կերպ ծավա-



լիւ Բագվի ու Թիֆլիսի Կուսկազմակերպութիւններէ  
 և քաղաքահայրերէրի նախաձեռնութիւնը: Այդ նախա-  
 ձեռնութիւնը պետք է ընթանա հետեւյալ գծերով՝  
 պետք և պատշաճօրէն տեղական շինանյութերը, պետք  
 և ջրմուղի, կոյուղու, կենտրոնական ջրուղման հա-  
 մար անհրաժեշտ գեֆիցիտային սարքավորումը փոխա-  
 րինել սպրտային, ցեմենտ, փայտե խողովակնե-  
 րով, կապե սաղիստորներով և այլն: Իսկ մենք այսպես  
 ենք աշխատում՝ կոմունալ շինարարութեան համար  
 ստատում ենք անպատճառ թուջի խողովակներ, յերկա-  
 թի սաղիստորներ, քաղաքների սանիտարական դու-  
 թիւնը բարելավելու համար անպայման պահանջում  
 են ջրելու կամ աղբ թափելու աւտոմոբիլներ: Բայց  
 ինչո՞ւ է ի կարելի այժմ կոմունալ տրանսպորտը կազմա-  
 կերպել լծկաններով:

Մեր քաղաքային տնտեսութիւնը դործնականորեն  
 բարելավելու համար մեծ նշանակութիւն է ստանում  
 կապերի հարցը: Մենք՝ կոմունալ տնտեսութեան բո-  
 ւոյր ընտղավառները պետք և նետներ կոմունիստներ,  
 կոմյերիտականներ և բանվորներ: Կիւի պլենումը մեր  
 առաջ դրեց քաղաքային տնտեսութեան համար աշխա-  
 տողներ պատրաստելու ԲՈՒՀ-եր ու տեխնիկումներ  
 ստեղծելու խնդիրը: Մենք՝ առանց մի բոլի Կորցնե-  
 րու, ձեռնամուխ կլինենք պլենումի վորոշումների իրա-  
 դրծմանը:

## ՀԱՎԱՍԱՐԵՑՆԵԼ ԱՐԴՅՈՒՆԱՐԵՐԱԿԱՆ ՃԱԿԱՏԻ ՀԵՏ ՄՆԱՑՈՂ ՄԱՍԵՐԸ

Ամփոփելով Կիւի պլենումի արդշունքները և ուր-  
 վագծելով այն խնդիրները, վորոնք բղխում են նրա վո-  
 րոշումներից ու կանգնած են մեր առաջ՝ Խորհրդային  
 Միութեան սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կա-  
 ուցումն ամրապնդու համար մզլող պայքարի տվյալ  
 ետապում, մենք պետք է մեր ուշադրութիւնը նախընթ  
 նախ թին և անդրկոմկառյան արդշունարերութեանը:

Վերջերս ամբողջ Խորհրդային Միութիւնը նշեց  
 նախ թի հնգամյա պլանի յերկու և կես տարում կատար-  
 վելը: Սակայն ի՞նչ յեղավ հետադաշում՝ ապրիլին,  
 մայիսին և հունիսին: Նվազեց նախ թի հանույթի տեմ-  
 պը և թերահատարելեցին պլանները: Դուրս յեկավ, վոր  
 հնգամյակը մենք կատարեցինք յերկու և կես տարում,  
 իսկ հաջորդ որը նվազում է նախ թի հանույթը...  
 Մենք ամբողջ աշխարհին, ամբողջ Միութեանն որինակ  
 տվինք, թե ինչպես նախ թադործները հնգամյա պլանը  
 կատարեցին յերկու և կես տարում, և դուրս է գալիս,  
 վոր հաջորդութիւնից հետո մարել է կարծես մեր խան-  
 դավատութիւնը, ստեղծվել է ստոնութիւն և վորոշ  
 դեմորիլիդացիոն արամադրութիւն: Այդ հարկադրում  
 է մեզ ահապանդ տալ այժմ: Պետք է ամեն ինչ անլ, մո-  
 րիլիգացիայի յեմքարկել ամբողջ կազմակերպութեան-  
 նը, վորպեսզի հուլիսին շրջադարձ առաջացնենք, հու-  
 լիսին և ոգոստոսին ծածկենք առաջին յերեք ամիսնե-  
 րի մեր հետ մնալը և լրիվ կատարենք նոր հնգամյակի  
 առաջին տարվա պլանը:



Ինչպես և կատարվում Անդրկովկասի ժողովի արդյունաբերությունը պլանը:

Ահա մայիս ամսվա պլանի կատարման հիմնական ցուցանիշները՝

բարածուխ՝ 51,5 տոկոս

պղինձ՝ 59,5 տոկոս

անդեզիտ՝ 22,6 տոկոս

ցեմենտ՝ 55,8 տոկոս

Միության ջիմիական գործարաններն անդեզիտ են պահանջում: Այնեվթը ցեմենտի կարիք ունի: Իսկ պլանը կատարվում է խայտառակորեն, այդ դանդաղեցնում է մեր արդյունաբերություն ծավալումը, ձգձգում է մեր նոր շինարարությունը:

Միմիայն յերկու ճյուղում՝ մարգանցի և տուֆի ասպարիպում պլանը կատարվել է 100,2 տոկոսով և 105,8 տոկոսով:

Այդ ցույց է տալիս, վոր մեր կազմակերպությունները վատ են ղեկավարում մեր արդյունաբերությունը: Այդպես չի կարող շարունակվել մեր արդյունաբերության պլանների կատարումը: Մենք այդ բնագավառի վրա պետք է քննենք մեր կուսակցական կազմակերպությունների ամբողջ ուշադրությունը, տասնյակ ղեկավար աշխատողներ ուղարկենք ցեմենտի գործարանները, անդեզիտի ու բարիտի հանքավայրերը, վորպեսզի նրանք տեղերում ողնեն մարտական հողի վերադնելու ամբողջ աշխատանքը, վորպեսզի ցույց տան, թե ինչպես պետք է ձեռն դասավորել բոլոր ուժերը, մոբիլիզացիայի յենթարկել ներքին բոլոր հնարավորությունները, չընդարձ ստեղծել ամբողջ արտադրական-տեխնիկական և կուսակցական-մասսայական աշ-

խատանքում, անհապաղ վերացնեն խայտառակ հետամնացությունը և հավասարեցնեն մեր տնտեսական ճակատի այդ թույլ մասերը:

## ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ

Ձի կարելի է կանգ չառնել բանվորներին ապրանք հայթայթելու գործի կազմակերպման վրա: Մենք Անդրկովկասում դեռևս չենք ավարտել սպառողական կոոպերացիայի վերակառուցումը կուսակցությամբ: Կի-ի և կառավարությունից վորոշումներ չհամաձայն: Այդ գործը պետք է ավելի արագ առաջ տանել: Դրանից է կախված բանվորների մասնակարգման լավագույն կազմակերպումը: Սպառողական կոոպերացիայի վերակառուցումը պետք է վոչ միայն կանոնավոր և լավ բաշխի, այն, ինչ վոր ստանում է կոոպերացիան աշխատավորների կենտրոնացված հայթայթման կարգով: Սպառողական կոոպերացիան պետք է ձևափոխվի լինի սեփական ձևափոխությունների, բանջարանոցների, այգիների կազմակերպանք: Այդ ասպարիպում շատ հետ է մնում մեր կոոպերացիան:

## ԸՆԿՃԵԼ ԴԱՏԱԿԱՐԳԱՑՈՒՆ ԹՇՆԱՄՈՒ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծավալուն և վճռական արշավ գործելով սոցիալիստական շինարարության ամբողջ ճակատում, մենք բոլոր մասերում հանդիպում ենք դասակարգային թշնամու կատաղի դիմադրությունը: Կուսակցությունը հուսահատ ջանքեր է անում կոլեկտիվացումը կազմալուծելու համար, թափանցում է կոլանտեսություններ



և աշխատում ե ներսից պայթեցնել վերջիններս: Կու-  
լակը բաց ե ի բաց և սքողված ձեով, յենթակուլակ-  
ների միջոցով, հանդես ե գալիս բամբակի, թեյի, ծը-  
խախտի դեմ: Կուլակը աշխատանք ե կատարում կու-  
տնտեսությունների դործախորժի դեմ, պահանջելով  
փոխարինել վերջինս որավարձով, աշխատելա յե մը-  
դում յեկամուտները ճիշտ բաշխելու դեմ և պաշտպա-  
նում ե համասարեցուցիչ—ըստ ջնջի բաշխումը: Գյու-  
ղատնտեսության սոցիալիստական վերակառուցման  
դեմ պայքարելու նոր ձեվեր ու մեթոդներ կիրառելով  
հանդերձ, կուլակությունը դեռևս չի հրաժարվում  
բաց կռիվից: Աղբրեջանում կուլակներն սոյանեցին հիւս-  
նալի բայլչեվիկ՝ ջրտնտեսության պետին, նրանք ըս-  
տանում են առանձին կոլտնտեսականներին, կոպոպտում  
են առանձին կոլտնտեսություններ:

Կուլակության վրա յեն հենվում քաղաքական կու-  
սակցությունների՝ վրաստանում՝ մենչևիկներին, Ա-  
ղբրեջանում՝ մուսավաթականներին, Հայաստանում՝  
դաշնակների թափթփուկները: Պայքար մղելով հակա-  
խորհրդային տարրերի դեմ, մենք անպարտ պիտք ե լի-  
նենք, չպիտք ե ունենանք վաչ մի վրիպում: Այդ բոլո-  
րը մեզանից սրահունջում ե ուժեղացնել դյուզական  
կուսակալմակերպությունների և դյուզխորհուրդների  
աշխատանքը, ստրագնել չքավորների ու բատրակների  
կազմակերպությունները:

Կուլակության դիմադրության հաղթահարումը  
պիտք ե կապված լինի բամբակադործության ու տեխ-  
նիկական մշակութիւնների շրջաններում համատարած  
կոլեկտիվացման ավարտման և այդ հիման վրա կու-  
լակության, վորպես գաղաղարքի, վերացման հետ:

Անդրկովկասի մյուս շրջաններում կոլեկտիվ շարժման  
հետագա ծավալման հետ:

Մեր առաջ կանգնած բոլոր խնդիրներն իրագործե-  
լու համար անհրաժեշտ ե հաղթահարել աջ ուղորտու-  
նիղմը և «ճախ» խոտորումները կուսակցական ու խոր-  
հրդային աշխատանքի և դյուզի կոլտնտեսական շի-  
նարարության սրտկտիկայում:

Դառակարգային թշնամու ազդեցության տակ ընկ-  
նող ուղորտունիստական տարրերը կուսակցության ներ-  
սում միշտ բաց ե բաց հանդես չեն գալիս: Նրանք հա-  
ճախ թաղնվում են կուսակցության հիմնական դժի  
հետե, իսկ դործնականում կատարում են իրենց ուղոր-  
տունիստական աշխատանքը: Կուսակցության գծի դեմ  
ուղղված բացահայտ յեղութենք չլինելը չպիտք ե  
թմրեցնի մեր ուշադրությունը: Ամեն տեսակ աչ և  
«ճախ» ուղարտումիլովի դեմ յերկու ճակատում մղվող  
վնասկան քայլչեվիկյան պայքարի հետ կապված կլինի  
տնտեսական այն կոմկրետ խնդիրների իրականացումը,  
վոր դրել ե մեր առաջ կկ-ի պլենումը:

ԱՆԴՐՊԵՏԻԱՅՐԻԱՅԻ ԱՄՐԱՑՈՒՄԸ ՀԱՆՐԱՊԵ-  
ՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒ-  
ԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ՎԵՐԵԼՔՆ Ե

Դառակարգային պայքարի սրվելու անխուսափելի  
հետևանքն ե լինում այն, վոր աշխուժանում ե մեծա-  
պետական չովինիղմը և տեղական նացիոնալիզմը:

Այժմ, յերբ կործանվում ե կապիտալիզմի վերջին  
բազան՝ մանր-գյուղացիական տնտեսությունը, ավելի  
ու ավելի ակտիվացող հակախորհրդային տարրերը ա-  
ռադադակում են, թե ազդերը վերանում են:



Դասակարգային թշնամու ակտիվացումն արտացոլվում է մեր կուսակցության շարքերում: Մի քանի կոմունիստներ, չհասկանալով Ֆեդերատիվ և հանրապետական որգանների միջև դոյություն ունեցող փոխհարաբերությունները, շեղվում են լենինյան ազդային քաղաքականությունից, դրանով իսկ վնաս հասցնելով Անդրկովկասի ժողովուրդներին ինտերնացիոնալ միասնության ամրացմանը և սոցիալիստական շինարարության հետագա վերելքին:

Դեռևս 1929 թվականին Համ. Կ (բ) Կ-ի ԿԿ-ն քաղաքական հսկայական նշանակություն ունեցող ցուցում տվեց, թե ինչպես պետք է ամրացնել Անդրֆեդերատիվ:

Ի՞նչպես ենք լուծում մենք այդ խնդիրը:

Ֆեդերային որգանները դիրեկտիվներ և պլաններ են տալիս Ֆեդերացիայի հանրապետություններին, նկատի առնելով նրանցից ամեն մեկի առանձնահատկությունները: Հանրապետական կազմակերպությունները կիրառելով այդ դիրեկտիվներն ու պլանները, մշակում են իրենց շրջանների համար ոպերատիվ առաջադրանքներ, կազմակերպում են մասսաներին այդ դիրեկտիվների շուրջը մեր առաջ դրված խնդիրներն իրագործելու համար: Ֆեդերային որգանների հետևյալ խնդիրն է՝ ստուգել, թե ի՞նչպես են կատարվում նրանց դիրեկտիվները հանրապետություններում, թե ի՞նչպես են կազմակերպում հանրապետությունների կենտրոնական կոմիտեները մասսաներին՝ կատարելու աշխատանքի այս կամ այն հերթական խնդիրները, բավարարելու իրենց, նախարարությունների, թեյա-

գործության ասպարիզում, փողային միջոցների մոբիլիզացիայի, անասունների մթերումների և այլ բնագավառներում: Ի՞նչպես և վո՞րտեղ կարելի չէ ստուգել այդ: Վոչ միայն կանչելով, հարց ու փորձ անելով դրա մասին հանրապետության այս կամ այն ղեկավար աշխատողին, այլև ստուգելով տեղում: Անդրյերկոմը շրջանում, գյուղում, գործարանում, հանքահորում ստուգում է, թե ինչպես են ղեկավարում ոպերատիվ կերպով հանրապետական որգանները, ինչպես են կազմակերպում նրանք մասսաներին, ցանքի բերքահավաքի, նավթի հանույթի, արտադրանքի պլանները կատարելու համար: Այստեղ զուգահեռություն չկա յերկրային և հանրապետական որգանների աշխատանքի միջև, աշխատեղ յերկրային որգանները չեն փոխարինում հանրապետականներին:

Հիմարություններ են դուրս տալիս առանձին աշխատողներ, յերբ ասում են, թե Ֆեդերացիայի ամրացումը հանրապետությունները վոչնչացնելու գիծ է: Դա վոչ այլ ինչ է, յեթե վոչ մենչեիկյան, մուսավաթական և դաշնական շաղկրատություն, վոր հնչում է մի քանի կոմունիստների բերանից: Անդրկովկասի կուսակցական և նախ և առաջ ավանգարդային կազմակերպությունները՝ Բագվի և Թիֆլիսի կազմակերպությունները պետք է բայշլեիկյան ջախջախիչ հակահարված տան այդպիսի խոսակցություններ անող բոլոր շաղկրատներին: Մեր վարած գիծն է հանրապետությունների ամրացումը, նրանց սոցիալիստական շինարարության բարձրացումը:

Վոմանք ասում են՝ ինչո՞ւ պետք է ամրացնել Ան-



դերձեղերացիայի որդանները հանրապետութիւնները աշխատողներով, իբրև թե դրանով իսկ թուլացնելով հանրապետութիւնները: Գնանք վնասակար խոսակցութիւններ են: Ի՞նչ է առում կը-ի 1929 թվ. վորոշումը: Բարձրացնել Ֆեդերացիան, ամրացնել նրան հանրապետութիւնների լավագույն աշխատողներով, իսկ հանրապետութիւններում ղեկավարութեան կանչել աշխատողների նոր խավեր: Հենց այդ է, վոր առում ենք մենք այժմ:

Իսկ նրանք, ովքեր խոսում են, թե ինչու հանրապետութիւններէջ աշխատողներ են վերցնում յերկրային աշխատանքի համար, գիմադրութիւն են ցույց տալիս հանրապետութիւնների ղեկավար աշխատանքի համար վերջին տարիներս աճած կոմունիստների, բանվորների նոր խավեր առաջ քաշելու գործին:

Մեր առաջ կանգնած խնդիրները պահանջում են մարտական տեմպ, անդուլ աշխատանք և համառութիւն: Այդպես ենք մոտենում մենք այն հսկայական կոնկրետ խնդիրներին իրագործմանը, վոր դրել է մեր առաջ կուսակցութիւնը:

Այդ վոմանց դուր չի գալիս: Աշխատանքի հետ մնացած բնագավառների հուշ տալը նախաձեռնութիւնից չի գրելում հանրապետութիւններին: Հետ մնացող ողակներին առաջ քաշելու և հավասարեցնելու ցուցումները մտքիկգացիայի յեն յենքարկում բայլշեվիկների նախաձեռնութիւնը:

Արդյոք մեր անդրկովկասյան որդանները մեղք չունեն: Ունեն: Առանձին ղեկներում և՛ ֆեդերատիվ, և՛ Անդրկովկասում դառնով միութենական տնտեսական

կադմակերպութիւնները չեղում են, ազավաղում կուսակցութեան ազգային քաղաքականութիւնը: Անհրաժեշտ է ժամանակին և վնասաւոր ուղղել այդպիսի սխալները:

Ֆեդերացիայի մի քանի որդանների սխալների ու հիմարութիւնների հիմնական ու գլխավոր պատճառն է այդ որդանների աշխատողների ցածր վորակավորումը, տեղական պայմանները չգիտենալը: Ահա թե ինչու մենք ամենատուր կերպով առաջադրում ենք անդրկովկասյան կադմակերպութիւնների ապարատը բնիկացնելու հարցը: Անդրկովկասյան որդանները բնիկացնելու համար անհրաժեշտ կոդերը մենք կարող ենք բառաւ Ադրբեյջանի, Վրաստանի և Հայաստանի կուսակցական կադմակերպութիւններէջ: Հանրապետութիւնները պետք է ոգնեն մեզ բնիկացնելու անդրկովկասյան կադմակերպութիւնների ապարատը:

Անդրկովկասի կուսակցական կադմակերպութիւններն ունեն գործունայ յեռանդ, լարված միասնական կամք, վոր կենտրոնացած է սոցիալիստական շինարարութեան խնդիրների լուծման վրա: Համառ աշխատանք կատարելով, մտքիկգացիայի յենքարկելով մեր ուշադրութիւնը կուսակցութեան կենտկոմի պլեկումի առջադրած մեծագույն խնդիրները մարտականութեւն իրագործելու շուրջը, հաղթահարելով բոլոր դժվարութիւնները, հետ մղելով դասակարգային բշմամուն, դեն շարտելով բոլորին, ով խանգարում է մեզ աշխատելու, մենք քայլ առ քայլ կնվանենք մի դիպք մյուսի հետեւից:





ՀՀ Ազգային գրադարան





41.8

ԳԻՆԸ 15 ԿՈՊ. (1<sup>3</sup>/<sub>4</sub> ռ )



Լ. ԿԱՐՏՎԵԼԻՇՎԻԼԻ

**РЕЗУЛЬТАТЫ ИЮньСКОГО ПЛЕНУМА  
ВКП (б)**

Госиздат ССР Армении  
Эривань—1931